

ԱՐՆԻԵԼԵԱՆ
Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՆԴԻՍ. ԸՄՍԵԱՅ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

1873

ՅՈՒԼԻՍ

ՊԱՐՈՒՆԱԿԱՐԹԻՒՆ

ՊՐՈՆԱԳԱՆ ԶԱՐԺՈՒՄԻ Ի ԶՈՒՅՆՈՒՄ
ՎԱՐՆԱՆՈՒ ԵՇԽԱՐՀԱՀԱՆԻՒՄ
ՎՆԻՔԵԱՄ ՍՅԱՄ
ԳՊՐՈՅՆԱՆՆ ԿԱՆԴԵՍԳ
ԶԱՐԺՈՒՄ Ի ԶՄԻՌՆԵՅ
ԲՈՂԱԳԱԳԵՆ
ԻՋԱՆՈՒ

ԶՄԻՒՌԻՆ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԷՆԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Գ. ՏԱՐԻ

1873

ՅՈՒԼԻՍ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆՐՈՇԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ Ի ԶՈՒՅՆԵՐԻՍ*

Պ. Լանկէէն յետոյ ամսկոն ելաւ Գէլլեր անուն սպիտակահէր ու պատկառելի ծերունին, որ տակաւին երկտասարդի պէս անոյգ ու զուարթ մարդ մի է: Սա կրօնքով քաթողիկէ է, բայց ազատամիտ քաթողիկէ, որ երբէք առիթ բաց չթողնիր իր ազգու լեզուով քաջօրէն պաշտպան կալու մարդկային իրաւանց, որոյ համար և շատ կ'սիրուի ժողովրդէն և ամէն տեղ կ'հրաւիրուի ատենաբանութիւն անելու: Այս

*Տես երես 241:

երևելի անձն առաջ պարզ վարժարեստ մի էր Զուլիջերից զիւղական
դպրոցներէն մինի մէջ։ Սորա ճառն ևս բաւականին համառօտած է
լրացրի մէջ։

Երբոր բաղմամբիւ երգիչները ժողովրդի եռանդուն ձայնակցու-
թեամբ աւարտեցին «Որ դասդ 'ի փառս արշալուսին» երգը՝ խօսիլ
սկսաւ Պ. Քելլեր և ասաց .

«Այո, կ'զայ նա զոյգեալ զփառս արշալուսին, նա որ զերտալայ-
ծառ, զերահրաշ և անքննելի ղեկավարն է մարդկային կենաց, և մեք
կ'տեսնենք զնա պճնեալ աստղերով և բազմեալ յաթոռ լուսոյ և ճշմար-
տութեան . աստղազարդ զլիւռն վրայ նոր ժամանակ մի կ'բերէ նա
մեզ։ Իմ կարծիքով մարդուս կարելի չէ աւելի մեծ երջանոտ թիւն վի-
ճակիլ, բայց եթէ լաւ ժամանակի կոչուած լինիլ յաշխարհ . և մեք
աւասիկ կ'ստրինք այնպիսի ատեն մի, երբ Տէր ինքնին մեզ հանդէս
կ'ենէ։ Եւ սուղիւ իրքան մեծ է այսպիսի ժամանակ ապրելու, ժա-
մանակիս պատերազմին ու յաղթութեան, խնդութեան ու վշտին մաս-
նակցելու բարեբաղդութիւնը, նոյնքան մեծ են և ճակատադրի մեր
վրայ դրած պարտաւորութիւնքը։ Իւրաքանչիւր օր չափով զործ կը
սահմանէ մարդուս և պատմութեան մէջ իւրաքանչիւր շրջան կատարե-
լու խնդիր մի կ'դնէ ազգերու և մարդկութեան առջև, և որպէս ամէն
մի անհատ ունի հոգալու իր առօրեայ պարտքը, նոյնպէս և ամէն մի
ազգ իր ժամանակի խնդիրը լուծելու պարտք ունի։ Այսօր քաղաքա-
կիրթ ազգերու առջև դրուած լուծման կարօտ ծանր խնդիրը իմ նա-
խորդ մեծարդոյ և պատուական ատենախօսն արդէն բացատրեց։

1870ին յանկարծ երկու պատերազմ քարոզուեցաւ . մինը որ կ'զար
միջնադարեան հրաբուդիւն — զերմանական ուղոյ դէմ, և միւսը որ
կ'զար ֆրանսայի միապետութեան կողմէն — զերմանական սրոյ դէմ։
Շփոթեալ ազգերը կանդ առին տեսնելու թէ ինչ կ'ենէ այս անակն-
կալ դէպքերէն։ Վարդը հասաւ նախ սուսերին . սա անցաւ Ռենոսէն
և վերադարձաւ դաբնի պսակով։ Թէ յաղթող և թէ յաղթեալ երկու
աղնիւ ազգերէն ևս բիւրաւոր աղնիւ զոհեր ընկան դաշտերու վրայ,
սակայն շատ թանգ չէին այս պատուական զոհերը ձեռք բերուած
մրցանակին հետ համեմատելով։ Ճակատամարտի ամպերն ու փռելքը
փարատեցան և ինչ կ'տեսնենք։ — Վ'տեսնենք աստ նոր յարուցեալ
զերմանական պետութիւն մի, վերածնեալ նոր ազգ մի, ունեւով իր մէջ
այնպէս քաջկրթուած և այնպէս լաւ կազմուած զօրութիւն մի զոր աշ-
խարհ տակաւին չէր տեսած և որ չխնդրեր պատերազմ, այլ խաղաղու-

Թիւն կ'աղբէ սպիտակ: Եւ ի՞նչ կ'տեսնենք միւս կողմը: — Ա՛տես՝
նենք մարդաստուած մի, անսխալական պապ մի, որ մարդկային մտաց
անհաս ճշմարտութիւնք դիմնալ կ'երաղէ, որ մարդկային խղճի վրայ
անսխալ դատաւոր դառնալ կ'ուզէ, որ իր իշխանութեամբ մեղքեր կը
հնարէ, մեղքեր կ'քաւէ, մոլորութիւնն 'ի դահ կ'ըլլանքնէ, առա-
քինութիւնը յերկիր կ'տապալէ, ճշմարտութիւնը 'ի դժոխս կ'արտաք-
սէ, խաբէութիւնն ու ոտութիւնը յերկինս կ'ամբառնայ. կ'տեսնենք
պատկեր մի, որ ըստ վկայութեան նոյն իսկ անսխալականաց՝ երկրիս
վրայ վարժապետներու վարժապետն է, դատաւորներու դատաւորն է,
Թագաւորներու Թագաւորն է, եկեղեցւոյ մի մասն և նոյն իսկ ամբողջ
եկեղեցին է: Անսխալական պապը դարձեր է ժամանակիս կրօնական-
եկեղեցական նշանաբանը (Losung). բայց և այնպէս նորա անսխալու-
թեան հետ կապուած խնդիրը բնաւ դործ չունի կրօնի հետ, այլ լոկ
քաղաքական և մեղ զոյ իցերացոցս համար վերջին աստիճանի ազգային
խնդիր մի է: Եւ ինչո՞ւ: — Զի ժողովութիւններու խորամանկութեամբ
հնարեալ այս մարդաստուածը բնաւ կրօնական պատկեր մի չունի և
կրօնական դառնութեան մի յայտարարն չէ, այլ ամենայն արարածոց
դերադոյն աւելն է. զի նա իր իշխանութեամբ չէ թէ միայն կրօնի ու
եկեղեցւոյ, առաքինութեան ու բարոյականութեան սահմանի վրայ տի-
րել կ'ուզէ, այլ բուն քաղաքական ու հասարակային յարաբերու-
թեանց մէջ ևս մտնել կ'յանդգնի:

Սովորաբար կ'պատահի որ երբ մարդ մի վատ բան մի ուզենայ տալ
միւսին — տալ թէ ծախելով. թէ փոխելով և թէ այլ մի կերպով —
և այն բանը դէշ յատկութիւններ ունենայ և այս դէշ յատկութիւն-
ներն ակնյայտի երեւին, պարզ աչքի զարնեն՝ առնողի սիրտը միամտա-
ցննելու համար՝ «Չէ, կ'ըսէ, բանն այնպէս վատ չէ որ երկնչիս,
ի՞նչ կայ որ վախճալու, մէյ մը բանեցուր և կ'տեսնես թէ ի՞նչ պա-
տուական բան մի կ'դառնայ դործադրութեան մէջ» — նոյնպէս կ'ըսեն
և ժողովութիւնները թէ՛ «Անսխալական պապը բնաւ առանձին բան մի
չէ» — Դէ լու. բայց ինչո՞ւ այդպէս շտապեցիք զլուսներդ կոտրե-
լով, ի՞նչ հարկ կար հարկաւոր եպիսկոպոս Հռոմ կանչելու, ի՞նչ
հարկ կար ամէնքի միտքը խռովելու, եթէ առանձին բան մի չունէիք
(Ծիծաղ):

Սորա դէմ միւսները կ'ըսեն. Այ, դուք ժեզուլութներդ սուտ կ'ըսէք
— անսխալական պապը նախ նոր բան մի է և մեք չենք ուղեր նոր
բան մտցնել մեր հին կրօնի մէջ. երկրորդ պապն ինքն իր համար մի-

ահեծան և ինքնիշխան զօրութիւն մի է որ անկարող է հաշտուիլ աղաւտ զիտութեան հետ, և երբորդ՝ անսխալական պապը շատ վտանգաւոր բան մի է արդի պետութեանց համար:

Գարձեալ կ'դան պապի արքանեալներն և կ'կանչեն. Ոչ, դուք էք սուտ ասողը: Պապի անսխալականութիւնը բնաւ նոր բան մի չէ, այլ 'ի սկզբանէ անտի կաթողիկական եկեղեցւոյ հիմնական հին ուսմունքն եղած էր և է, և ամենեքեան ընդունած են զայն:

Բայց անսխալական Պապի թշնամիքն ասով ևս չեն ուզեր խաբուիլ, մինք ևս թոյլ չենք տար խաբել զմեզ: Եթէ անսխալականութիւնը հին բան մի էր, ուրեմն ինչո՞ւ նորէն շինեցին, ի՞նչ պէտք էր հին բանը նորէն շինելու, ինչո՞ւ նոր ժողովի առաջնորդող սուրբ հոգին չասաց թէ՛ Թողէք այս բանը, սա հօ արդէն 1800 տարեկան հին բան մի է, անսխալական պապը հօ վաղուց է որ կայ: Միթէ 1800 տարիէն ետքը դեռ նոր դտաք Սուրբ Գրքի խօսքերն թէ՛ «Աման քո ազաչեցի, Պետրէ» և այլն: 1800 տարուայ մէջ շատ անդամ ընդհանուր ժողովներ եղան և անթիւ եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ, քահանաներ, արքաներ և զիանական աստուածաբաններ — ամէնքն ևս խիստ իմաստուն և վարդեան մտադիկ — միասին զումարուեցան և այս ամէնքի, աշո, ամէնքի միաքն ևս կ'լուսաւորուէր հոգւովն սրբով և ամէնքն եւս կ'դնէին իրենց վճիռներու տակ՝ «Այսպէս հաճոյ եղաւ Սուրբ Հոգւոյն և մեզ»:

Արդ՝ ի՞նչպէս կ'լինի որ Սուրբ Հոգին միայն 1800 տարիներէն ետքը 1870 յուլիսի 18ին միայն դուռ պապի անսխալականութիւնը, ուրեմն Սուրբ Հոգին 1800 տարուայ միջոցին բան մի չգիտէր այս մասին (Ծիծաղ):

Ժեզուիթներու յառաջ բերած փաստաբանութիւնն այս ուսման հնութեան նկատմամբ լոկ խաբեբայութիւն մի է, աւել ոչինչ: Ժեզուիթներու զօրապետը Թրիէնթի ժողովին մէջ փառահեղ առեւտարանութեամբ մի առաջարկեց իրաւ պապի անսխալականութեան վարդապետութիւնը, բայց ժողովի հայրերը դեռ այնքան արիւտ թիւն ունէին և այնքան վ'պատուէին իրենց հովուական պաշտօնը, որ առօք վառօք մերժեցին այն առաջարկութիւնը: Աւրեմն այն ժամանակ Սուրբ Հոգւոյն հաճելի չէր անսխալականութեան վարդապետութիւնը, իսկ այսօր հաճելի է: Ո՛հ, ի՞նչ վտեմ գաղափար Սուրբ Հոգւոյն վրայ:

Բօնապարտի և Պապի իրիւր ժողովները կանոնաւոր որոշմամբ զեկեղեցին 'ի վեր դասեցին քան Պապի իշխանութիւնը, ուրեմն Պապն

անսխալական է : Քօնստանդուլի ժողովը հետզհետե երեք Պապ գահա-
վիժեց, եթէ նորա անսխալական լինէին ժողովն անշուշտ իրենց տե-
ղը կ'ընտրուր զնոսա : Քօնստանդուլի և Պապի ժողովներու առաջնորդո-
ղը դարձեալ Սուրբ Հոգին էր . արդ' ինչպէս եղաւ որ նա ուրիշ բան
ազդեց սուրբ վարդապետներու միտքն և իսպառ անտես թողուց Պապի
անսխալականութիւնը : Այո, այն սուրբ հայրերը չէ թէ միայն չընդ-
ունեցին Պապի անսխալականութիւնը, այլև պարզ յայտնեցին Նիկի-
ոյայոս և պապին թէ՛ Տէր Պապ, կամ դու կ'ընդունիս մեր ժողովի
վճիռը, և կամ մեք դքեղ չենք ընդունիր : Բարեսիրտ Նիկոդէոս ընկա-
լաւ այս որոշմունքն և ապա թէ պերմանացիք Պապ ճանաչեցին զնա :

Եւկլիդիոս Դ-ի ընտրութեան ժամանակ ժողովը զանազան պայման-
ներ պահաւ առջևը, որք ըստ մեծի մասին քառութեան ստակին և այն
ատեն Հռոմի մէջ անամօթ լըբութեամբ դործուող անլուր չարութեանց
խնդրոյն կ'վերաբերէին : Հռոմի վաղիկանն այն ժամանակ վաշխառուի
կրպակ մի դարձեր էր, ամենախտյատակ առն մի, որոյ նմանը հազիւ
թէ կարելի է գտնել այսօր, 'ի բայ առեալ թերևս բարեպաշտ Ասէլ
տիկնոջ կուսարանն 'ի Միսիսի . . . (Միսիս) : Եւկլիդիոս ընդունեց
պայմանները, բայց կ'ջանար զանց առնել և չկատարել զնոսա : Ուստի
նորան յայտնեցին՝ կամ պահպանիր Պապի մէջ սահմանուած պայման-
ները կամ իջիր աթոռէդ, և մինչև անգամ ուրիշ ոսոխ մը գրին քովը՝
զֆելիքս Եւ . և Եւկլիդիոս 'ի վերջոյ իրաւ ընդունեց այն պայմանները :
Ուրեմն անսխալականութեան խօսք չկար այն ժամանակ, զի Սուրբ
Հոգին չէր լուսաւորած սուրբ հայրերու միտքն այս մասին :

Այնուհետև Պապի աթոռն ու Փրանսական պետութիւնն առանձին
դաշնագիր մի շինեցին — *concordat* մի — որոյ չորս անուանի յօդուած-
ներով դադղիական եկեղեցւոյ արտօնութիւնքն կ'որոշուէին և որոյ չոր-
րորդ յօդուածը պարզ կ'ըսէր թէ՛ Պապի անսխալականութիւնը չընդ-
ունուիր բնաւ : Ուրեմն Գերմանիան և Ֆրանսան անսխալական Պապ
մի չէին գիտեր, իսկ Անկլիոյ մէջ տակաւին մինչև նոր ժամանակներս
իւրաքանչիւր իրլանտական եպիսկոպոս արշտօն ընդունելով պարտ էր
երգելիլ, որ Պապի անսխալականութիւնը բնաւ կաթողիկական եկե-
ղեցւոյ գաւառութիւն մի չէր և եթէ ոչ որք չհրամայուիր հաւատալ
այդ սուտ վարդապետութեանը :

Սուրբայն Զուլիգերիոյ եպիսկոպոսներէն մին՝ Պապի վիճակաւորն
Պ. Լաշա՝ առանձին գրով մի հրատարակեց 1870ին, որ Պապի ան-
սխալականութիւնը վաղուց 'ի վեր ընդունուած չին վարդապետութիւն

մի է, և սոյն իսկ Լաշան Հռոմի մէջ Պապի անսխալականութիւնը դաւանանքով ստորագրեց յետոյ ուրիշ թուղթ մի, ուր Զուլցեբրիոյ ութ եպիսկոպոսները կ'այսպէս են, թէ այն վարդապետութիւնը շատ հին և հին բան մի էր: Լաշան կ'ըրէ թէ այս ամէնը հին ուսմունք մի է և մի և նոյն Լաշան՝ ինքն իրեն հակառակելով՝ 1867ին տպուած քրիստոնէական հրահանգի մէջ եկեղեցւոյ վրայ խօսելիս կ'ըսէր թէ՝ «Եկեղեցական վարդապետութեան հեղինակներն են Պապն և Եպիսկոպոսները»: Այս որոշ խօսքերուն չնայելով նա կ'քարոզէ այժմ թէ Պապի անսխալականութիւնը հին ուսմունք մի է, ուրեմն սուտ էր իւր շինած հրահանգը: Առաջ նա կ'ըսէր. «Պապն և եպիսկոպոսներն են քրիստոնէական վարդապետութեան անսխալ քարոզիչքը՝ իսկ հիմա կ'ըսէ. «Միայն Պապն է անսխալական վարդապետը:» (Գնահ. հանդիս էջը ցելից: Ծ. թարգմանչի:)

Ուրեմն այս բոլորը դատարկ խօսքեր են. անսխալականութեան վարդապետութիւնը սոտուղիւ նոր բան մի է. և թէ նոր չլինէր գիտնական աստուածաբաններն այսքան փոթորիկ չէին բարձրացնէր և պետութիւնքն 'ի զոր չէին վրդովիւր տարակոյսներով: Բայց այս մտմտուքը փարատելու համար նորէն յառաջ կ'ենեն ժեղով ի թներն և կ'ըսեն. «Պապը տարապայման իշխանութիւն բնաւ չբանեցնէր, նա միայն վճիռ կ'հաստանէ կրօնի, բարոյց, կարգապահութեան և եկեղեցւոյ վերաբերեալ բաներու մէջ, այն ևս չէ թէ մինակ և ինքնիշխան, այլ միշտ աջակցութեամբ Սուրբ Հոգւոյն» (Ծիծաղ): Նա կարող չէ մէնակ բան մի որոշել ու սահմանել — ոչ, այլ միշտ Սուրբ Հոգւոյն հետ միասին կ'որոժէ:

Խօսիմք նախ այս վարդապետութեան բովանդատութեան վրայ, որ իբր թէ մէջն կրօնի, բարոյց, կարգապահութեան և եկեղեցական վարչութեան բան ունի: Երբ 1870ին Հռոմի Վաղիկանու մէջ ձեռնարկուած բաները յայտնի եղան աշխարհի, Ֆրանսական նախարարն Տիւվալ գրեց Անթոնէլլին թէ՝ Վաղիկանէն ծուխ կ'բարձրանայ, ի՞նչ են արդեօք եփածները: Անթոնէլլի պատասխանեց ճարպիկ թղթով մի, թէ Պապի ուղղակի և անուղղակի իշխանութիւնը զտելու վրայ ենք, թէ Պապն միայն կրօնական գործերու մէջ ուղղակի իշխանութիւն ունի, իսկ ուրիշ բաներու մէջ անուղղակի, այսինքն թէ Պապը՝ իբրև զերագոյն դատաւոր մարդկային խղճի՝ մեղքի վերաբերեալ գործերն միայն կ'ընէ: Ֆրանսացւոց նախարարը՝ թերևս Եղէնիայի դրդմամբ՝ հաւատաց այս խօսքերուն: Բարեբախտաբար ժեղով ի թներն

ինքեանք մեկնեցին մեղ թէ ինչ պէտք է հասկընալ Պապի անուղղա-
կան իրաւասութիւն ասելով: Թարգմանի անուն ժեզուիթի հեղինա-
կած եկեղեցական օրէնսդիտութեան գրքի մէջ, ուր խօսք կայ նաև
Պապի անուղղակի իրաւասութեան վրայ, պարզ ասուած է, թէ այս ի-
րաւասութեան ենթակայ է ամէն բան որ կապ ունի եկեղեցւոյ հետ:
Արդ՝ հիշ կարող է ինչ ասել թէ հրք են եկեղեցւոյ հետ կապ ունեցող
բաները: Թօսքանիոյ մեծ դուքսը քանի մը տարի առաջ ազատ սահմա-
նադրութիւն մի շինեց իր երկրի համար և ուղեց հրատարակել զայն:
Պապը գրեց դքսին. «Թողէք այդ բանը, որ դէշ օրինակ կարող է
դառնալ իմ հռոմայեցւոյ համար»: Թօսքանիոյ սահմանադրութիւնն
եկեղեցական գործերու հետ կապ ունէր ուրեմն և դուքսը պարտ էր
յետ քաշուել զայն հրատարակելէն: Քիչ մը ետքը Պապը լսեց, որ
Թօսքանիոյ մէջ քանի մի ականաւոր հրէայ բժիշկներ կ'դառնան, և
Պիոս Թ. գրեց Թօսքանիոյ մեծ դքսին. «Ականջիս հասաւ որ երբայե-
ցի բժիշկներ կ'ապրին եղեր երկրիդ մէջ. տես որ շուտով գնան կորչին
այդ տեղերէն»: Եկեղեցւոյ հաւատարիմ որդին կրկին կատարեց Պապի
հաճոյքն և հրէաներն երկրէն արտաքսեց: Աստորիայիք խնդրեցին ի-
րենց Վայսրէն որ առաւել ազատամիտ սահմանադրութիւն մի յօրինէ.
Վայսրը յօժարեց և տուաւ նոր սահմանադրութիւն մի, որով իւրաքան-
չիւր քաղաքացի նաև 'ի կրօնական մասին իրաւանց հաւասարութիւն
կ'ստանար: Նոր սահմանադրութեամբ կ'որոշուէր այնպէս, թէ ամէն
մի դաւանութիւն հաւասար իրաւունք ունի սեփական վարժարաններ
շինելու և թէ — այս էր ամենասարսափելին — Լեհաստանի կաթո-
լիկ գերեզմաններու մէջ բողոքականք ևս կարող էին ազատօրէն թա-
ղուելու: Պապն իսկոյն խորհուրդ կազմեց, ամբարիշտ անլուր օրէնք
անուանեց զայն և նշովեց թէ զայն հնարողքը, թէ հրատարակողքը և
թէ գործադրողքը: Աստորիան դեռ մինչև այս օրս չկրնար մոցննել
Թիրօլի մէջ կրթական նոր օրէնքը. երբ նորերս կրթութեան վերա-
տեսուչը Թիրօլ զնայ՝ կանայք անդամ մտնուանդ տէրտէրնեղն
գրդուած՝ յարձակուեցան վրան և քիչ մնաց որ սպանէին: — Տեսա՞ք
այժմ թէ ինչ է Պապի անուղղակի իրաւասութիւնը: Եթէ Պեժիոյ
մէջ փոքր ինչ ազատամիտ պաշտօնէութիւն մտցուի և կամ պատերազմա-
կան գործոց նախարարն քիչ մի ազատօրէն խորհի՝ «գետինն անցնի
այնպիսին» կ'զուրան ժեզուիթները: Եթէ Զուիցերիոյ դաշնակիցները
ժեզուիթներուն անյարմար սահմանադրութիւն մի ուղեն շինել իսկոյն
հրաման կ'տան Պապին որ աղօթէ 'ի Հռոմ և Նօդը — Տափն որ թաւիս

նոսի ի փարիզ, և սոցա միաճամուռ ջանիք կ'հերքուի զաշնակցութեան նոր սահմանադրութիւնը: — Այս է Պապի անուղղակի իշխանութիւնը, և այսպէս կ'վարդապետեն ժեզուիթք արևելքէն մինչև արևմուտք, հիւսիսէն մինչև հարաւ:

Գալով միւս խնդրոյն՝ նոքա կ'ըսեն թէ Պապը մէնակ չգտներ, այլ թէ Սուրբ Հոգւոյն հետ միասին կ'դասէ: Պէտք է այս բանի վրայ ևս քիչ մի խօսիլ:

Գիցուք թէ Հռոմի առաջին Պապի իրաւ Պետրոս էր, զի աւանդութիւնը կ'ըսէ, որ նա իբր թե քսանհինգ տարի մնացեր է այնտեղ: Ժեզուիթները չեն կարող ու բանալ որ Պետրոս ևս Սուրբ Հոգւոյ աղընցութեամբ կ'ըլլէր: Արդ՝ Պետրոս կ'ըլլէր. «Դուք ապշ էք ընտիր: Թաղաւորութիւն, քահանայութիւն, ապա սուրբ, ժողովուրդ տեսչական, որպէս զի զձեր առաքինութիւնն նուիրեցէք պնդ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն: Հնազանդ լեռուք ամենայն մարդկեղէն տանդժուածոյ վասն Տեառն: Սոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց իւրեանց:»

Իսկ այսօր ժեզուիթները կ'ըսեն. «Թաղաւորական քահանայութիւնը մեք ենք, մեք ենք սուրբ ազգը և ոչ թէ դուք. դուք հաւատացեալքդ չախիս հպատակիք տմէն անսակ մարդկային սահմանադրութեանց և օրինադիր իշխանութեանց, այլ պարտիք հնազանդիլ մեզ, որ միայն եմք իշխան և հրամայող և դերադոյն զատաւոր: Իսկ դուք կանայք, որ անհատաւ ամուսին ունիք, պարտ չէք հնազանդիլ նոյա, այլ պարտէք նոյա դէմ զործել:»

Չորրորդ դարուն Յուլիոս Ա. պապը կ'վարդապետէր թէ Որդին բնութեամբ հաւատար է Հօր և Սուրբ Հոգւոյն. իսկ Լիպէրիոս պապը կ'նղովէր այս վարդապետութիւնը: Գրիգորիոս Ա. կ'ըսէր թէ «տիեզերական եպիսկոպոսի» անուն կրելը զԱստուած արճամարհել է, իսկ Գրիգոր Թ. կ'պնդէր թէ Պապը տիեզերական եպիսկոպոս է: Դարձեալ հետաքրքրելի դէպք մի: Ուրպան Է. պապը կ'հրամայէր 1642ին թէ ոչ ոք ունի իրաւունք ծխախոտ քաշելու, ծամելու և կամ քթախոտ քաշելու եկեղեցւոյ մէջ, և Իննօքենտ ԺԲ. մինչև անդամ սաստիկ բանադրանք և անէծք կ'սպառնար եկեղեցւոյ մէջ քթախոտ քաշողներուն. իսկ Պենէտիկոտ ԺԲ. որ երեւի թէ քթախոտ սիրողներէն մէկն էր, վերցուց այս անսխալական պատուէրներն և թող տուաւ ժամատացութեան մէջ անդամ քաշելով ինչքան կամենայ: Հաջար այսպիսի օրինակներ կարելի է յառաջ բերել, բայց չեմ ուզեր:

Ժեզուիթները նզովից արժանի հերետիկոսութիւն կ'համարին եթէ մէկն համարձակի ասել, որ Պապի անուղղակի իրաւասութիւնն աշխարհական պետութեանց համար վտանգաւոր ուսմունք մի է, որ Պապին շատ անգամ սխալած և շատ անգամ ևս աշխարհային գործերու մէջ խառնուած են: Սակայն դիմենք պատմութեան: Գրիգորիոս Է. պապը կ'ուսուցանէր թէ՝ «Աշխարհային իշխանութիւնը չար սատանայէն կ'ծաղի և պարտ է ենթակայ լինիլ Պապին, պարտ է շարժիլ ըստ թեւադրելոյ եկեղեցական իշխանութեան և հնազանդիլ Ռիայն հռոմէական Պապին, և այս հնազանդութիւնն անշուշտ պէտք է իւրաքանչիւր մարդոյ հոգւոյ փրկութեան համար: Եկեղեցին մինչև անգամ ունի իրաւունք բաշխելու և յետ առնելու աշխարհական իշխանութիւնքը ինչպէս և կամենայ»: Ուրիշ Պապ մի կ'քարոզէր թէ՝ «Պապն ունի իրաւունք կաթողիկոսներուն պարզելու զկաթողիկ երկիրները»: Ալեքսանդր պապն այնքան յիմարացաւ, որ մինչև անգամ երկու մասն բաժնեց բոլոր փիւղերքը — 'ի հիւսիսային և 'ի հարաւային բևեռ, և մէկ մասն ընծայեց Պրականդայի տոհմին: Գրիգորիոս Ը. հաղուսմանքու ձեն անգամ որոշեց առանձին հրովարտակով: Եւ վերջապէս նվ չլիտէ որ Պապերու համար ոչ երկուսը սուրբ բան մի է և ոչ ուխտը, զի նոքա այս բոլորը ստակով կ'լուծեն:

Ահա ասածներէս պարզ կ'հետևի — և ամէն օր կ'լսենք այս — թէ կաթողիկական եկեղեցին շատ թիւր դրութեան մէջ է, զոր բնաւ անկարելի է հաշտեցնել հասարակային կարգի հետ, և այս է պատճառն որ նոր գրականութիւնն այնչափ զբաղուած է յերեւան հանելու նորա թերութիւնքը: Այս օրուայ Հռոմի ժեզուիթական եկեղեցին իսպառ անմիաբանելի է պետութեան հետ: Պապն իր «Եկեղեցի» միանգամայն կ'ժխտէ մեր ազգային սահմանադրութեան հիմնադիր օրէնքներն ու սկզբունքը, կ'մերժէ հաւատոյ և խղճի ազատութիւնը, եկեղեցւոյ օրէնքներուն կ'ստորակարգէ պետութեան օրէնքները և ուրիշ կարծիքի տէր մարդիկն նզովելով՝ կ'պահանջէ որ կաթողիկոսներն հակառակ լինին պետութեան օրէնքներուն, այն ինչ իւրաքանչիւր բողոքական դոյիւք և մարմնով պարտ է հնազանդ կալ այս օրինաց: Ուստի անսխալականութեան վարդապետութիւնը վերջին աստիճանի վտանգաւոր է պետութեան համար և ժեզուիթները բնաւ չեն կարող հաշտուիլ մեր հասարակապետական ազատ կարգերու հետ, և մեք կ'ստենանք իբրաւ, որ նոքա չեն յարգիր մեր օրէնքները: — Ի՞նչ անենք ուրեմն:

Ամենէն պարզն էր • զլիտվին զուրս ելնել այս տեսակ եկեղեցիէն , բայց ուր երթանք : Բարեպաշտ սրտի մի համար պապական ճնշողութեան և բռնակալութեան ներքեւ ոչ իրաւունք կայ և ոչ զիմանալու հնար : Պէտք է ուրեմն անպատճառ ելք մի գտնել : Բաժնուիլ կաթոլիկական եկեղեցիէն — շատերու համար սա խիստ զիւրիւն դործ մի է • բայց ուր կ'մնայ բուն ազգը որ դեռ չդիտէ առաջնորդութիւն խելքով : Միթէ նա կ'օժարի՞ հեռանալ եկեղեցիէ մի , որ այնպէս շքեղ , հոյաւիպ և թաղրոնական արարողութիւնք ունի և որորանէն սկսեալ մինչև զերեզման կ'ուղեկցի մարդուս : Իսկ ննջելոց յիշատակը , կաթոլիկ մեռած հօր և մօր յիշատակը : Հանդուցելոց յիշատակ — ոչ , ազգը , ազգի սիրան ու հողին չեն հանդուրժեր այս բանին • առ այս արդեւք է նոյնպէս և ազգականներու և ընկերներու կապը : Արեւմտեան ազգը թող կաթոլիկ մնայ , միայն թէ ազատ լինի մեր կօնը , հռոմէական բռնակալէն զերծ մնայ մեր ազգը , ազգային լինի մեր եկեղեցին : Ազգային եկեղեցին այն տեսակ հաստատութիւն մի է որ լիովին կ'յարմարի հասարակացեալական կեանքին : Ինչպէս որ հին ժամանակ , նոյնպէս և այժմ թող ազգային կամքի վրայ հիմնուի եկեղեցին , թող յետ տրուի ազգին իր արդար իրաւունքը և թող սա ընտրէ իր քահանայքն և եպիսկոպոսունքը : Ազգի ձեռքով բնորեալ եպիսկոպոսը թող հնազանդի սօղոյսին օրինաց և ժողովրդի քամակէն երգումներ չտայ Հռոմ նստած փոխատուծոյն , թող ջնջուին արմատով քաւութեան ստախներն և այս տեսակ անիրաւ վաշխաւութիւնքն որք կ'խայտառակեն զեկեղեցին , թող իսպառ զլորուին շատ մի աթոռներ և նոյստ տեղ մեր երկրի համեստ բարույ յարմարող կոկիկ ու պարզ կարասիք դուրն : Գեռ շատ բան պէտք է անել , խիստ շատ , սրպէս զի իրը ճամուկ զարդերէն զատուելով՝ նորէն ստանար իր հին պարզութիւնն և նախկին անպատճառ իերայարանքը :

Յուսով եմ , և ժամանակիս նշաններն նոյնը կ'աւետեն , թէ անշուշտ բան մի կատարուելու է այս ուղղութեամբ , միայն թէ պէտք է որ ազգն ևս սրտով մտնանայի վերանորոգութեան : Մեք ամէնքս կ'հաւատանք 'ի մի Աստուած , 'ի մի հայրենիք : Եթէ վերանորոգութիւնն իր հեմութեամբ կատարուի՝ նա կ'շնորհէ մեզ երջանիկ օր մի , երբ Զուրկերից բոլոր քրիստոնէական դաւանութիւնքը կ'երգեն միաբան՝ «Մի է Աստուած մեր և մի են մեր հայրենիք» : Բոլորով սրախ երջանկութիւն և բախտ կ'մաղթեմ իմ երկրիս և թէպէտ ես իմ սպիտակ ալիքով չեմ տեսնելու այն օրը , բայց այս ևս սիրտիմք է իմ սրտիս , որ նա

արդէն բացուեր է և գալու է անսպասելի » (Երկարատե և շատ եւ
ռանդազին ծափահարութիւնք) : Մ'նայաքը գալ անգամ :



ՎԻՒՆՆԱԹԻ ԱՇԽԱՐՀԱՆԱԿՆԵՐԸ

ԲԱՐԵՎԱՄ, ԲԻՍԹՆԱԽԻԹԷՆ զրած վերջին համակիր մէջ Վիճնառ
դալու գիտաւ որով թիւնս յայտնելով խոտապեր էի այլ և այլ տեղեկու
թիւնք հաղորդել Ա. Մաճուղ աշխարհահանդիսի վրայ :

Գալա աւասիկ մէկ շաբաթ եղաւ և արդէն քանիցս անդամ պայելու
թիւն արի տիեզերահոգի հանդիսին, սակայն պարզ կ'խոտովանիմ որ
դեռ միանպամայն անդոր եմ որոշ հաշիւ մը տալ իմ տեսած հրաշալեաց
վրայ : Ճարտասանական ձևի համար չեմ դորձած եր հրաշալիք բառը,
այլ կ'յանկամ արտայայտել այս խօսքովս թէ երևակայութեան մէջ ան
զամ չէի յանդգնած պատկերացնել ինչ այն սքանչելիքը, որք այժմ շո
շափելի իրականութեամբ և հոյակապ փառօք դրուած են այն տեղ 'ի
տես աշխարհի :

Յի բիսեան լծի անդորրաւէտ եղերքը, կապուտակ ջրերը, զուարթ
հովիտները, ձիւնապատկ լեռները թողնելով յանկարծ Վիճնայի աշ
խարհահանդէսն բերուիլը շատ գիւրին յորժ է. ասոր համար պէտք
է միայն քսան ժամ : Սակայն գիւրին չէ Զուիցերիայ լոյս շրջանէն
անմիջապէս այս բազմաշփոթ աստղաբեղն ընկնելէ ետքը մարտեւ և կա
հմաւորել այն հաղար ու մի նոր տպաւորութիւնը, որք ամեն մի քայ
լափոխին ճնշողական բռնութեամբ կ'աղղեն եկաւորի վրայ և դրեթէ
կապաւ կ'ընկալեն նորա զգայարանքը :

Արդէն վեց եօթն անգամ յաճախեցի այն տեղ և չնայելով որ առ
այժմ ամբողջութեան վրայ միայն ընդհանուր դադափար մի կաղմելու
մտօք շատ կ'արապէի քայլերս, բայց և այնպէս հսկայական հանդիսի
անթիւ բաժիններու կէտն անգամ չկրցայ ուղք անցնել և վերջին ան
գամ յոգնած դադրած՝ մահաճեւական մզկիթի դէմ յանդիման՝ դեղու
բուետոյց պալատի առջև երկաթեայ թաւաբաշ առիւծի պատուանդա
նի վրայ նստելով վիշտ կոչեցի մարդարէի սուրբ մօրուքը, որ այսու
հետեւ դէթ մի քանի օր հանդիսո շնորհելու իմ յոգնուշարջար
դիւտու :

Երկու օր է որ կ'կատարեմ խոստմունքս, այլ տակաւին հանգիստ չեմ գտած: միտքս լիքն է խուռն սլատկերներով և դեռ չլիտեմ, թէ երբ ներդաշնակութիւն կ'ընկնի այս բարելծնեան քաօսի մէջ: Որպէս մարդուս ստամոքսը, նոյնպէս և միտքը կանոնաւոր դործողութեան համար չափ կ'պահանջեն ընդունած նիւթերու նկատմամբ. եթէ անոնքը չափազանց լինի՝ ստամոքսը կ'աւերուի, նոյնպէս և միտքը կը փոթի, երբ յանկարծ անթիւ տպաւորութիւնք ազդեն վրան:

Եւ այս բոլէիս Վիէննա եկող մարդու ընդունած տպաւորութիւնքն արդարեւ չափ ու սահման չունին, և ոչ մի ուշադիր այցելու ազատ չմնար սոցա պատճառած մոռաորական յուզմունքէն. զի աշխարհահանդիսի դանաղան բաժինները գէթ երկու օր պտըտելով նա առաւել շատ բաներ կ'տեսնէ, քան թէ տարիներ տեղող ճամբորդութեամբ — կ'տեսնէ տաք և սառն կլիմաներու բազմատեսակ իրերն և ամենայն ինչ որ մարդկութիւնն ՚ի ձեռն մշակութեան, արհեստից, արուեստից և գիտութեան կրցեր է յառաջ բերել այսօր: Նորա աչքերուն կ'զարնեն արեւելքէն և արեւմուտքէն, հարաւէն և հիւսիսէն հեռաւորութեան արդեւքներն ջնջելով ՚ի մի վայր ամփոփուած միլիօնաւոր նիւթեր, և մէկ տեղ գումարուած ամեն ազգի մարդիկ, որք կամիբրեւ դործաւորք՝ աջնիւ եռանդով կ'մրցին իրարու հետ աշխատութեան դաշտի վրայ և կամ իբրեւ լոկ այցելուք՝ մերթ բնութեան առատ զանձներ կ'զիտեն և մերթ մարդկային հանճարի վսեմ՝ յաղթանակները՝ տանն իններորդ լուսաւոր դարում:

Եկաւորին այնպէս կ'թուի թէ ազդերն ու երկրներ իրարմէ անջատող ըստ մասին բնական և ըստ մասին մարդկային յիմարութեամբ հնարուած արուեստական խափրներն վերցեր են, կ'զգայ որ ազգային թշնամութիւնքը վայրենի ժամանակներէ մնացեալ բիրտ բարբարոսութիւնք են, կ'համոզուի որ բովանդակ մարդկութիւնն եղբայրական մէկ ընտանիք է և կ'ուզէ հաւատալ որ կոյր մոլեռանդութեամբ մինչև այժմ իրարու դէմ չարիք նիւթող կրօնները կարող են վերջապէս հաշտուիլ և տեղի տալ որ երկրագնաիս ազգերը՝ զիրար զիշատելու փոխարէն՝ սիրով միանան աշխատութեան և լուսաւորութեան պայծառ ատպարիզի վրայ:

Այո, ես կ'հաւատամ անմահ Սէն Սիմօնի խօսքին թէ՝ «Բանաւորեղծներու ոսկի դարը մեր ետեւ չէ, այլ առջեւ է» և տօնական զուարթ զգացմամբ՝ ըստ հաճոյից քայլերս փոխելով կարճ միջոցին Անկլիայէն Չինաստան կ'երթամ, Հնդկաստանէն Սիպիւր, Ռուսաստան

նէն Եղիպտոս, Ճափոնէն Տաճկաստան, Զուիցերիայէն Պրուսիա, Ֆրանսայէն Պարսկաստան, Գերմանիայէն Պուլսաւա, Թուրքիոյն Հիւսիսային Ամերիկա, Աւստրիայէն Աւստրալիա, Իտալիայէն Շուէտիա, Ալժէրիէն Կովկաս, և այլն և այլն, և սիրոտ կ'հրճուի, երբ կ'տեսնեմ այս երկիրներու որոշ յատկութիւնքը, հիանալի բերքերը և բնակիչներն աշխատութեան ճոխ արդասիրը, որք անասելի լիութեամբ շարուած են դիտողներու առջև:

Բայց հար է Հայաստանը, ուր են հայերն և ինչո՞ւ չեն երևիր այս համաշխարհական տօնի մէջ. միթէ՞ մեք իրաւ այն աստիճանի կորածու յետնեալ ազգ ենք որ չենք կրնար միւս ազգերու կարգն անցնելով՝ պարզեցնես ասել թէ՞ մեք ևս 'ի զուր չենք ապրիր երկրքի տակ, մեք ևս կ'աշխատինք և առասիկ մեր արդար քրտանց աշխիւ պտուղները: Կ'ըսեն թէ հայերն առևտրի ընդունակ մարդիկ են. գուցէ իրաւ է: Սակայն ուր են սոցա դործունէութեան հետեանքը, ուր զէթ փոքր ինչ հաւասարութիւն եւրոպական ուսմամբ առաջնորդուող օտարազգի վաճառականութեան յառաջ բերած արդիւնքի հետ: Մեր վաճառականներու վաստակը միշտ աննշան և աշխատութիւնը միշտ ապարդիւն պիտի մնայ, քանի որ նոքա հրաժարուին այն կորստաբեր կարծիքէն, թէ առանց ուսման ևս կարելի է առևտուր տեսնել մեր դարում և չհամոզուին որ իւրեանց որդիքը՝ երկրին և ազգին օգտուէտ, գործի հմուտ, ձեռներէց և շրջապէս վաճառական լինելու համար 'ի մանկութենէ արդէն կարօտ են հիմնաւոր, այն, հիմնաւոր կրթութեան և ոչ թէ հայ խանութներու ապականեալ օգին, ուր բիւրաւոր թշուառ մանկունք՝ հնամուլ ծնողներու աններելի տմարդութեամբ՝ ուսանելու ոսկի ժամանակը կորցնելով՝ չարաչար կ'մաշուին սոսկալի վայրենութեան մէջ:

Թախառական Հրէան անդամ թերևս այնքան պտրտած չէր յերկրէ յերկիր, որքան որ ես շրջեցի աշխարհահանդիսի բաժիններում հայութեան քաղցր նշոյլ մի սրտնելով, բայց գտայ և ոչինչ, որ յիշեցնէր ինձ չորս միլիօն թուող ազգի գոյութիւնը, բաց 'ի Պ. Միքայէլ Միանսարեանցի Բնաբէն, որ մնջիկ դրուած է մէկ անկիւնում:

Անցեալ աշխարհահանդէսներն ես տեսած չեմ: Լրագիրները կը վկայեն որ Վիէնայիսն արտաքին շքեղութեամբ և ներքին հարուստ բովանդակութեամբ նախորդներէն շատ գերազանց է, թէ և նիւթերու զաւաստութեան մէջ չունի Փարիզեանի յարմարութիւնքը:

Լճոտոնի տիեզերական հանդէսը 1862ին 186,125 քառակուսի

մէթր տարածութիւն կ'ընէր, փարկերն 1867ին 441,750 մէթր, իսկ Վիէնայի նոր հանդէսն ունի 2,330,631 քառակուսի մէթր:

Այս լայնափիւռ տարածութիւնը կ'դանուի Փրաթերանուն ծառաւէտ կղզու վրայ, որ ուրախ վիէննացւոց ամենասիրելի զբօսավայրն է: Հանդիսի սահմանի մէջ կան չորս գլխաւոր շինութիւնք, որոց հիմնարկութեան համար պէտք եղեր են շատ միլիոններ և տասն հազարի չափ մշակներ: Առաջինն է Արուեստից հոյակապ քարուկիր պալատը երկու հարկը հազար փուղ երկաթէ շինուած բարձրադիտակ, դրօշադարդ դմբէթով — Ռօթօնտ — որոյ վրայ կ'եւանեն հարիւրաւոր մարդիկ՝ ամբողջ հանդէսը, ընդարձակ քաղաքը, մօտաւոր շրջակայքն ու հեռաւոր դաշտերը, գետերն ու լեռները տեսնելու համար: Գմբէթի տակ, պալատի կեդրոնում, կանգնած է սիրուն ջրբուլի մի և սուրա շուրջ կողմը կ'կազմէ ութսուն մէթր տարածութիւն ունեցող կամաւրաւոր մեծ սխներով պարփակեալ բոլորաձև հրապարակ մի, որ կարելի է տեսել բովանդակ աշխարհահանդեսի սիրտն է: Այս տեղ իւրաքանչիւր ազգ շաբեր է միայն այն երկիրներու ընտիր տարազները, որոց մշակութեան մէջ ինքն առաջինն կ'համարուի և որք արդէն գլխաւոր մրցանակի արժանի գտնուած են նախորդ հանդէսներուն: Ամբողջ շինութիւնն ունի չորս գլխաւոր դռներ. հարաւայինն ու հիւսիսայինն ուղղակի կ'տանին հրապարակ, այսինքն Ռօթօնտը յորմէ դէպ' ի արեւելք և արեւմուտք կ'երթան փառահեղ, բարձր, սիւնաղարդ և լուսաւոր սրահներ 905 մէթր երկայնութեամբ և 25 մէթր լայնութեամբ և այս երկու թևերը կ'բաժնուին դէպի հիւսիս և հարաւ նայող 75 մէթր երկար և 15 մէթր լայն բաղնաթիւ կողմնակի սրահներով, որոց մէջ կամ ներքին հրապարակէն կարելի է մանել և կամ գրէն, զի իւրաքանչիւրն ևս մի մի գուռն ունի հիւսիսային և հարաւային կողմէն: Շինուածքի տարրական ձևն է ուրեմն հորիզնական երկար զիծ մի, որ բաժնուած է առաւել կարճ ուղղող դժերով, կամ աւելի պարզ ձևան կմախք մի: Այս հսկայական շինութիւնը 103,000 քառակուսի մէթր տեղ կ'ընէ: — Երկրորդ շինութիւնն է Մեքենաների պալատը, 990 մէթր երկարութեամբ և 28 մէթր լայնութեամբ, ուր բոլոր մեքենաները կ'բանին: Այնպիսի ժամանակա չնրեր այս հրաշալի բաժնի վրայ տեղեկութիւն տալու: Երրորդն է Գեղարուեստից շքեղ պալատը, և վերջապէս չորրորդն է երկրագործութեան և գիւղական տնտեսութեան մեծ տունը:

Այս չորս գլխաւոր հիմնարկութիւններէն զատ կան և ուրիշ բա-

զում շէնքեր, որք դրուած են կամ բայ հրապարակի վրայ և կամ
ստուերաւոր ծառաստանում: Աշխարհահանդիսի ոլորաստոյտ ուղի-
ները շրջելիս՝ այցելուն կ'տեսնէ Աւստրիացոց և Ռուսաց Վայսրի ջոկ
ջոկ սլաւաւանները, Սուլթանի, Շահի և Քիտիվէի արեւելեան փար-
թամ շքեղութեամբ զարդարեալ տպարանքը, Մահմէտի մզկիթը, Ե-
զիպտական տաճարը, Ամերիկայի, Զուլայերիոյ, Աւստրիոյ, Գերմա-
նիոյ, Շուէտի զեղեցիկ վարժարանները՝ մանկավարժական ամենայն
պիտոյիւք հանդերձ, զորս միւս նամակներէս մինի մէջ անշուշտ նկա-
րադրելու եմ, մանկային խաղերու սրահը, զանազան կամուրջներու
տարապէս, կոթողներ, սէն Աթարաի թունէլը երկաթուղով և շո-
գեկաւքով, այլ և այլ աղլաց պանդոկներ, սրճարաններ, զիւղական
տներ, գոմեր, թափառական ցեղերու վրաններ, ասիական և եւրոպա-
կան մանասանք Զինացոց և Ճափոնացոց կրպակներ, միջազգային
դրախտութիւն, ընթերցարան, հեռագրատուն. այնուհետեւ պատեւազ-
մական, նաւաշինութեան և ծովային դործոց, անտառատնութեան,
լեւնադիտութեան, հանքաբանութեան և բուսաբանութեան առան-
ձին առանձին քարաշէն բաժինները, կանաչ ձեռագործութեան փայ-
տաշէն տաղաւարը, բժշկարան, մանկաբարձութեան տեղ,* և այլն և
այլն, զորս ուշադրութեամբ զննելու համար գոնեա մի մի օր պէտք է
շնորհել իւրաքանչիւրին: Բացյայտմանէ կան և այլ բաղումներ, զորս
շիներ են կամ առանձին մարդիկ և կամ զատ զատ ընկերութիւնք. օրի-
նակի համար իշխան Շվարցենպերկի սքանչելի տաղաւարը, ուր
դրուած են միայն իւր արքայական կալուածքի բաղմատեսակ բերքերը
և միայն իւր դործարաններէ մէջ մշակուած նիւթերը: Յետոյ Վիէննա
հրատարակուող *Նոյն աշխարհում* մեծահամբաւ լրագրի հոյակապ քա-
րաշէն տաղաւարը՝ տպարանի վերաբերեալ բոլոր նիւթերով և մէկ ա-
հալին շողեշարժ մեքենայով, որ աշխարհիս հրաշքներէն մինն է. սա
ինքը կ'կարէ թուղթը, ինքը կ'զնէ զայն մամլոյ տակ և 13,000 օրի-
նակ կ'տպէ մէկ ժամու մէջ՝ ամեն մի թերթին ևս ինքը ծալելով և
կարգ կարգ գիզելով:

Աշխարհահանդիսի զանազան տեղերն ամէն օր ճաշէն ետեւ նուազ-
ածութիւն կ'լինի և ունինդրաց լսելիքը կ'պարարուին անզուգական
Շթրաուսի զմայլեցուցիչ երաժշտութեամբ:

* Մինչեւ այժմ դեռ պարզ որոշուած չէ այս կարեւոր խնդիրը, թէ ո՞րքան
ստակ պէտք է առնել այն մանուկներէն, որք առանց մուտքի գին վճարե-
լու աշխարհամոլիս սպրդելով՝ յանկարծ այն տեղ լոյս կ'տեսնեն:

Այս ջոք ու ցամաք եւ շատ համառօտ նկարագրէս կ'երևի արդէն որ աշխարհահամբաւի մէջ բան մի չկայ որ դրուած չլինէր մարդուս խելքն ու միտքը, սիրտը, աչքը, լսելիքն ու վերջապէս փորը յաղեցընելու համար։ Եթէ այս բոլոր բաներէն այցելուն կշտանայ, զոյաբաններն թմրին եւ էլ չկրնայ ոտքերն շարժել թող բազմի մօտ հարիւր հազար աթուռներէն մինի վրայ եւ կամ նստի ձեռաշարժ փոքրիկ կառքերէն մինի մէջ, որ ժամը մէկ ֆիօրլինով միշտ պատրաստ է տանիլ զնա ուր եւ կամենայ։

Աշխարհահամբաւը բացուեցաւ մայիսի 1ին. բայց մինչև հիմակ դեռ շատ բաներ անստարտ լինելով կարելի է ասել որ այս շաբաթ միայն իսպառ վերջացան հսկայական դործի բոլոր պատրաստութիւնքը։ Այցելուայ թիւը միջին հաշուով ամեն օր 50 հազարի կ'հասնի։ Չորեքշաբթի եւ շաբաթ օրերը մուտքի դինն է կէս ֆիօրլին, իսկ միւս օրերն ութսուն քրօյեր, այսինքն համարեա թէ մի ֆրանք ու կէս։ Ներս մտնելէն ետքն այլ ես բան մի վճարել պէտք չէ զանազան բաժինները տեսնելու համար։ Յոյս կայ որ մուտքի դինը շուտով առաւել կ'նուազի։

Լրագիրներու հրատարակած լուրերը Վիէնայի մէջ տիրապետող իբր թէ սարսափելի թանդութեան համար՝ մասամբ եւ եթ ճշմարիտ էին միայն մայիս ամսի վերաբերմամբ. իսկ այնուհետև նոյն իսկ մամլոյ եւ քաղաքային վարչութեան շնորհիւ տանուտէրներու, պանդոկապետներու եւ այլ սոցա նման օտարի քսակին սիրահար յափշտակիչներու եւ ուանդը շատ շիջաւ եւ այժմ՝ հիւրերու անթիւ բազմութեանը չնայելով նոյնքան փարայի հաշիւն գիտցող եկաւորը բաւականին էժան կ'աւելնէ ապրիլ Վիէնայում։ Բնակարանի եւ միւս կենսական պիտոյից գիները դրեթէ նոյն են, որպէս եւ ուրիշ եւրոպական մեծ քաղաքներու մէջ եւ խտրութիւնն աննշան։

Վատարտեմ նամակս շատ դեղնցիկ, բայց, աւանդ, չխտարուերու փափաք մի յայտնելով, որ իւրաքանչիւր հայ մարդ իսկոյն դար Վիէնայի աշխարհահամբաւը, մարմնոյ ու հոգւոյ աչքերով տեսնէր, ձեռքով շօշափէր գիտութեան ոյժը, արդիւնքն, օգուտն եւ վերջապէս հաւատար թէ ամենայն ինչ աւանդական հրաշք լոկ մանկային եւ առասպելական ցնորք են այն իրական հրաշքներու առջև, որք կ'գործուին այսօր աշխատութեան եւ լուսաւորութեան ամենայաղթ զօրութեամբ։

16/28 յունիսի, 1873. Վիէնա։

Փ. ԱՆՐԴԱՆԵԱՆ

— Այս ամէնը «*բնական*» բանաւոր կ'երևի, բայց դործնապէս՝ դժուարին կ'ընթացի ինչ ըմբռնել թէ ինչո՞ւ համար մարդիկ աւելի հարուստ չպիտի լինէին եթէ յանկարծ սկուտները կրկնապատկելով՝ իրենց դրամական պաշարն ալ աւելնար, և հետևապէս աւելի բաներ զննելու կարող պիտի լինէին և այսպէս ճարտարութիւնն ալ զօրաւոր մղում մը պիտի ստանար:

— Աւելի բաներ պիտի զննէինք, բայց ի՞նչ. հարկաւ օգտակար իրեր, ուտեստ, հագուստ, տուն, զիրք, պատկեր, և այլն: Ուրեմն հաստատէ նախ որ այս բաներն ինքնին կ'արտադրին, բաւական է որ արքունի Դրամանոցն երկրքէն իջած ոսկի դրամ կոխէ, կամ աղցային տաղադրատունը թղթադրամ կտրէ. վասն զի կարողես բանաւորապէս կարծել թէ, քսա որում շուկան մետաղէ կամ թղթէ փրանքներ շատցած են, թէև ցորենի, ասուի, նաւերու, գլխարկներու, սօլերներու քանակութիւնը նոյնը կ'մնայ, ամէն մարդ օգտակար բաներու մեծազոյն բաժին մը պիտի ստանայ: Յիշէ մեր խաղասէրները: Ընկերական կարգին մէջ՝ զործաւորներու ձեռք աշտանակին ներքև դրուած քաներն են միայն օգտակար, և ձեռքէ ձեռք շրջաբերող սկուտները՝ փութերն են: Եթէ փրանքներն աւելցնես առանց օգտակար բաները բաղմնապատկելու, սա պիտի հեռւի միայն որ իւրաքանչիւր փոխանակութեան համար աւելի փրանք պէտք պիտի լինի: Ասոր ազդեցոյցը կը անմոռ երբ մի և նոյն փոխանակութիւնն աւելի պղինձ կ'ապահանջէ քան արծաթ, աւելի արծաթ քան ոսկի: Պատճառ. վասն զի մետաղները տարբեր համեմատութեամբ տարածուած են երկրի երեսը:

— Արհաւիրաւորն ունենալ, բայց կ'փափաքիմ որ իրաւունք չունենաս: Եւ շրջապատող անաղորոյն և վնասակար հետևութիւն ունեցող տառապանաց մէջ՝ փոքր ինչ կ'մխիթարուէի խորհելով որ մարդկային

ընկերութեան բոլոր անդամներն երջանիկ ընելու հեշտ միջոց մը կայ :

— Եթէ ոսկին ու արծաթը հարստութիւնն իսկ լինէին, դիւրին չէ հանքէ զուրկ երկրի մը մէջ անոնց քանակութիւնն աւելցնել :

— Դիւրին չէ, բայց թղթադրամը, զոր այնքան դիւրին է հաստել, եթէ առատ թղթադրամ ունենայինք, բանէ մը զուրկ չէինք մնար : Այդ քու անգութ դրութիւնդ այնպիսի յոյսեր կ'փարատէ, որոց սկզբունքն արդարեւ մարդասիրական է :

— Այո, տիեզերական երանութեան համար տաժուած ամուլ փափաքանաց պէս : Եթէ բաւական լինէր դրամատոմներ տալը մեր պիտոյքը, ճաշակները, բաղձանքը դո՛հ ընելու, միթէ մարդիկ մինչև ցարդ այդ հնարը չ'պիտի գործածէին : Ճշմարիտը՝ հրապուրելի հնար մ'է : Աշխարհէս պիտի արտաքսէր այն ոչ միայն աղէտալի յափշտակութիւններ, այլ նոյն իսկ աշխատութիւնը՝ թղթադրամ կտրելու մեքենայէն զատ : Կ'մնայ միայն որոշել թէ թղթադրամներն ի՞նչ պէս պիտի դնէին տուներ՝ զոր ոչ որ կառուցած է, ցորեն՝ զոր ոչ որ մշակած է, կտաւներ՝ զոր ոչ որ գործելու աշխատութիւնն յանձն առած է :

— Այդ պատճառաբանութեանդ մէջ կէտ մը կայ որ ուշս կ'դրաւ : Խօսքիդ նայելով՝ եթէ վաստակ չկայ, զեան ալ չկայ փոխանակութեան գործիքը բազմապատկելու խնդրոյն մէջ, ինչպէս որ քու խաղաւէրներուդ օրինակէն տեսանք, որ միայն սլատրանք կ'ընցին : Ուրեմն փորձէ այս փիլիսոփայական քարն որ դայլախաղներն ոսկի դարձնելու զաղուհիքը պիտի սորվեցնէ մեզ, և հուսկ ուրեմն թղթադրամը : Եթէ յամարիս՝ ժողովուրդը մեծ բարիքէ մը պիտի զրկես, եթէ փորձն ընելով չյաջողիս՝ ժողովուրդը միայն իր յոյսը պարապ ելած պիտի տեսնէ :

— Նախ՝ մեծ չարիք մ'է ժողովրդեան մը համար պարապ ելած յոյս մը. մեծագոյն մ'է նաև երբ կառավարութիւնը շատ մը հարկերու թոյլատրութիւնը կ'իմացնէ՝ այնպիսի դարմանի մը հատալով որ անվրէպ անարդիւն պիտի մնայ : Սակայն այդ դիտողութիւնդ ոյժ պիտի ունենար, եթէ թղթադրամը հանելէն և կոտորուէն ետև՝ բոլոր արժէից հաւասարակշռութիւնն անմիջապէս և նոյն ժամանակի մէջ տեղի ունենար ամէն բաներու մէջ և երկրին ամէն կողմը : Այս միջոցն՝ ինչպէս մեր խաղասէրներու սրահին մէջ, պիտի յանդէր ընդհանուր նշաւակութեան մ'որու վրայ ուրիշ բան չէր մնար ընելու այլ միայն իրարու երես նայելով ծիծաղիլ : Բայց գործերն այսպէս չեն դառնար : Այդ բանին փորձն արդէն եղած է և ամէն անգամուն որ բռնակալներն դրամն այլալեցին . . . :

— Ո՞վ կ'առաջարկէ այլալել դրամը . . . :

— Է՛հ, Աստուած իմ, մարդիկը բռնադատել որ պաշտօնապէս ֆրանկ անունով մկրտուած թղթի կտորներ առնուն 'ի վճարումն, կամ բռնադատել որ իբրեւ հինգ կրօն կշռող արծաթէ դրամ ընդունին, թէև իրօք երկուք ու կէս կրամ կ'կշռէ, բայց զայն ևս պաշտօնապէս ֆրանկ կոչած են, մի և նոյն բանն է, եթէ ոչ յոռազոյն բան մը: Եւ ինչ փաստեր որ կարելի է մէջ բերել 'ի նպաստ թղթադրամներու, արդէն ըերուած են օրինական սուտ դրամին համար: Արդարեւ՝ քու տեսակէտդ ընդունելով՝ երբ մարդիկ կարծէին թէ փոխանակութեանց գործիքը կրկնապատկել, փոխանակութիւնները, նոյնպէս փոխանակեալ իրերը կրկնապատկել էր, հարկաւ պիտի մտածէին միամտաբար որ պարզագոյն միջոցն էր սկուտները կիսել և բոլորին արծէքն ու անունը կէսերուն տալ օրէնսդրապէս: Լաւ, թէ առաջին և թէ երկրորդ պարագային մէջ նուազումն անվրէպ է: Արծենմ թէ ասոր պատճառն արդէն ըսի: Ա՛մույ ինձ ապացուցանել քեզ, թէ այս նուազումն, որ թղթադրամի համար կրնայ մինչև դրօշի հասնիլ, յաջորդաբար շատերը կ'պատրէ, և մանաւանդ աղքատները, պարզամիտները, գործաւորները, գեղացիները:

— Մտիկ կ'ընեմ, բայց համառօտէ:

— Շատ լաւ, ուրեմն համաձայն եմք սա կիտին վրայ թէ՛ հարստութիւնը մեր աշխատութեամբ արտադրած օգտակար բաներու ամբողջութիւնն է, կամ լաւ ևս, մեր պիտոյից և ճաշակաց հայթայթման համար մեր ըրած ճղանց արդիւնքն է: Այս օգտակար բաներն իրարու հետ կ'փոխանակուին, ստացողներուն պատշաճութեանց համեմատ: Այս գործողութիւններն երկու կերպով կ'լինին. մին կ'անուանի *փոխանակութիւն* (troc), այն է որով ծառայութիւն մը կ'հստուցանէ մարդ հաւասար ծառայութիւն մ'անմիջապէս ստանալու համար: Այս ձևով գործողութիւնները չափազանց սահմանաւոր կ'լինէին: Արպէս զի կարենան բազմանալ՝ ամէն ժամանակ և ամենուրեք, անձանօթ անձերու մէջ և անչափ կտորներով, միջնորդական գործի մը պէտք եղաւ, այս է դրամը: Դրամը փոխանակութեան պատճառ կ'լինի, որ ուրիշ բան չէ այլ միայն բազմախառն փոփոխում մը: Ահա այս կէտը լաւ դիտել և ըմբռնել պէտք է: Փոխանակութիւնն երկու *փոխանակութիւն*, երկու արտադրիչէ կ'բաղկանայ. *վաճառորդ* ու *գնորդ*, որոց միաւորութիւնը կարեւոր է զայն կազմելու համար: Ծառայութիւն մը կ'զանաւորուի սկուտի մը փոխարէն, յետոյ՝ սոյն սկուտով ծառայութիւն մը կ'գնէ: Ահա այն

ատեն միայն փոփոխումը կատարեալ է, ահա այն ատեն միայն աշխատութեանդ ճշմարիտ վարձն ուղիւ: Ի հարկէ ուրիշին պիտոյքը հոգալու կ'աշխատիս որպէս զի ուրիշն ալ քու պիտոյքդ հոգալու աշխատի: Որչափ ատեն որ ձեռքդ ծառայութեանդ փոխարէն սկստան ունիս, ուրիշ անձի մ'աշխատութիւնը խնդրելու վիճակին մէջ կ'զսնուիս միայն: Երբ խնդրես, այն ատեն տնտեսական շրջանն քեզ նկատմամբ կատարուած կ'լինի, վասն զի այն ատեն միայն աշխատութեանդ ճշմարիտ վարձը ստացած կ'լինիս: Փոփոխութեան դադարէն տրուած և ընդունուած ծառայութիւն կ'ենթադրէ. ինչո՞ւ համար նոյնը չպիտի լինէր փոխանակութեան համար, որ կրկնեալ փոփոխում մ'է:

Եւ աստանօր երկու գիտողութիւն կայ ընելու. նախ՝ բաւական անշնան պարագայ մ'է որ աշխարհի մէջ շատ կամ քիչ դրամ լինի: Եթէ շատ կայ՝ շատ պէտք է, եթէ քիչ կայ՝ քիչ պէտք է իւրաքանչիւր գործողութեան համար. ահա այս է բոլոր խնդիրը: Երկրորդ գիտողութիւնն է այս. ըստ որում մէկն փոխանակութեան մէջ դրամը կ'երեւի, մարդիկ վերջապէս փոխանակեալ իրերու նշանն ու չափը սեպեցին զայն:

Մնացածը հարկէ անհամար:

ԱԶԳԱՅԻՆ

ԴՊՐՈՅԱԼՍՆ ՀԱՆԳԻՄԵ

Այս տարի ևս անցեալ ամսոյ 4ին և 28ին քաղքիս Ս. Հռիփսիմեան և Ս. Մեսրոպեան վարժարանաց տօնախմբութիւնները կապարուեցան, ըստ սովորութեան: Յառաջագէմ աշակերտուհիք Ս. Հռիփսիմեան հանդիսին առեւի շուք տալու համար Ս. Սահակայան անուն՝ Մեծ. Թէրզեանի թատրերգութիւնը համառօտուած ներկայացուցին, ի մեծ զոհունակութիւն բազմաթիւ կանանց և արանց: Իսկ Ս. Մեսրոպեան հանդիսին մասնաւորապէս փայլ տուողն եղաւ Գեոր. Մեչք. Վ. Մու-

խառնանց՝ որ այն օրերը քաղաքս գտնուելով՝ հաճեցաւ հանդիսին ներկայ գտնուիլ և պարապալին յարմար ատենախօսութիւն մ'ընել, որու համառօտ իմաստը յօդուածիս վերջը կ'հրատարակենք։ Ս. Մեսրոպ սանուհի բունք ևս, թէև գաղղիարէն և հայերէն թատեր-գութիւններ ուներ էին ներկայացընելու մտօք, սակայն քանի մը պատճառներով այէտք եղած տեսարանական պատրաստութիւնները չլինելուն, հայերէն ներկայացումը դանդաղ տառուցաւ։ Ըստ մեզ՝ այս դանդաղութիւնը մեծ կորուստ մը չէ, թէև հասարակութիւնը փայլուն ցոյցեր կ'սիրէ, այլ կարևորն է աշակերտաց ուսմանց քննութիւնն ու այս տարեկան շրջանին մէջ ձեռք բերուած արդիւնքը։ Իրեւ վարժա-րանաց տեսուչ՝ մեզ չիմար այս արդիւնքը հաստատել, այսչափ միայն ըսենք որ՝ Արժ. Պետրոս վարդապետի և Ոսումնական խորհրդոյ ան-գամայն ուսանց երբեմնակի ներկայութեան՝ հարցաքննութիւնները շա-րունակուեցան տօնախմբութենէ ետք՝ և ամիս մը տեւեցին։ Աւ հասա-րակ աշակերտուհիք և աշակերտք դոհացուցիչ վիճակի մէջ գտնուեցան իրենց ուսման ընթացքին մէջ, և Ոսումն. խորհրդոյ ըրած մէկ քանի սնօրէնութիւնները թէ ներքին բարեկարգութեան և թէ նիւթական մատակարարութեան մասին անարդիւն չմնացին։ Յսւ է մեզ միայն որ այս Խորհուրդն մինչև վերջը մի և նոյն եռանդով իր պաշտօնը չչա-րունակեց այնպիսի պատճառներու համար որ իրեն և Քաղաքական ժո-ղովին մէջ զպրօցներու մատակարարութեան համար եղած զբաւակնան պայմաններուն կ'վերաբերին, և որոց վրայ խօսին այժմաւելորդ կ'սե-պենք . . . :

• Աւասիկ Գեր. Մեղիսեղեկ վարդապետին ըրած ատենախօսութեան համառօտութիւնը .

«Այսօր դումարուեր էք Ս. Մեսրոպայ անուան տարեգարձին առ-թիւ, վասն զի այս վարժարանս Ս. Մեսրոպայ անունը կ'կրէ։ Այս տեսակ հանդէսներ մեծ նշանակութիւն ունին ամէն ազգայ, և մանաւանդ մեր մէջ։ Մեծ խորհուրդ ունին սնունք երբ փառացիցոյցեր չեն, երբ հոգւոյ զգացմանց յայտարար նշաններն են, ինչպէս որ նոյն իսկ կրօնական ծիսակատարութիւններն ու արարողութիւնները չոր ու յա-մաք ձևեր կ'գառնան երբ սրտի արտայայտութիւնները չեն, և ջերմե-ռանգութեամբ չեն կատարուիր։ Եկեղեցին և ուսումնարանը կ'տօնեն Ս. Մեսրոպայ յիշատակը։ Եկեղեցին կ'տօնէ զայն, վասն զի Ս. Մես-րոպն իր հայրապետաց կարգը կ'գասէ, վասն զի նա եկեղեցին բարե-կարգած է, նա Սուրբ Գիրքը թարգմանած է որ եկեղեցւոյ ընթեր-»

ցումաց նուիրական դանձն է, և նորա յիշատակն անմահ պահելու արժան դատած է. ուսումնարանը կ'տօնէ զայն, վասն զի հայերէն տառերն անոր գիտն են և ինք դրականութեան հիմնադիրը: Ուստի ուր որ գտնուի կայ, հոն կայ նաև Ս. Մեսրոպայ յիշատակն ու լուսաւորութեան տարրը: Հետեւապէս ամէն հայ վարժարան, ամենուրեք պարտաւոր են տօնել անոր յիշատակը: Օտար ազգեր մեծ մարդոց արձաններ կ'կանգնեն, և իրաւամբ, բայց մենք պէտք չունինք քարե արձաններ կանգնել Ս. Մեսրոպայ 'ի պատիւ: Երբ Արարատայ աշխարհը կ'ուղեւորիս և Օշական գիւղի եկեղեցին կ'մտնես, սեղանի տակը սև տապանաքար մը կ'տեսնես որ թէև անշուք, բայց կ'ստիպուի ծունկ չոքել և համբուրել արտասուօք այն դարաւոր քարն, վասն զի Ս. Մեսրոպայ տապանաքարն է, որ մեր միտքը կ'առնէ կ'տանի զէպ 'ի Մեսրոպ . . . : Եկեղեցին մեծ արձան չէ կանգնած, որովհետեւ ինքն արդէն կենդանի է եկեղեցւոյ մէջ և մեր բարոյական կենաց ամէն պարագաներու մէջ կ'ներկայանայ մեզ անոր պատկերը: Գոյրոյններն ևս մեծ արձան չեն կանգնած — Հայաստանի գրադիտութեան Հօր համար, ինչպէս որ ուրիշ ազգեր գիտեն կոթողներ կանգնել իրենց հանճարներու համար, բայց փոյթ չէ, միայն թէ գոյրոյնները մէկմէկ բարոյական արձաններ ընելու աշխատինք, այն ատեն ամէն մէկը Մեսրոպայ յիշատակին կենդանի և շնչաւոր արձան եղած կ'լինի, որ մեծ է քան մարմնաբայ արձաններ: * Ուստի և իրաւամբ պարտինք ըսել որ այս վարժարանս ալ արձան մ'է կենդանի: Ես քաջ չգիտեմ անոր այժմեան վիճակն, ըստ որում անոր քննութեանց ներկայ չլինելով չեմ կարող դատել, Սակայն այս գիտեմ որ իզմիրցի հայք իրենց գրիւք, իրենց յան-

* Ճիշտ այն օրն որ Գեր. Մելք. վարդապետը բարոյական արձաններ կանգնելու յորդոր կ'կարգար Ս. Մեսրոպայ տունը, քաղքիս օտար դպրոցներու միոյն (Տիարօնէզ) մէջ աշակերտուհիք, որոց մէջ հայեր ալ կան, քարէ արձան կ'դառնային, այսինքն թատերական բեմի վրայ՝ մարմնովին զանազան արձանակերպ անորակ դիրքեր կ'ընէին՝ զոյնզոյն լոյսերու մէջ և հանդիսականաց սքանչացում կ'պատճառէին: Այս հանդիսին ժամանակ խաղարկու օրիորդաց ոմանց հագուստը շողերէն բռնկելով՝ քիչ մնաց որ պիտի այրէին, եթէ իսկոյն օգնութիւն չգտնէին: Մենք չենք կարծեր որ յիշեալ զիշերօթիկ վարժարանին տեսչութիւնն, որ անշուշտ իբր գերմանացի, գերմանական մանկավարժութեան հմուտ է, դաստիարակութեան մաս սեպէ այս տեսակ դերասանական անգրիտախաղութիւն, այլ աւելի տրամադիր ենք հատալու որ տեղւոյս հասարակութեանց ցուցադրական եռանդը զոհ ընելու համար՝ ստիպուած է աշակերտուհիքն 'ի տեսարան հանել իբրեւ շողուն արձաններ:

դարեւութեամբ և զանազան դիւրութիւններու շնորհիւ կարող են իրենց վարժարաններն առաջին կարգի վարժարաններ ընել յԱրեւելս, եթէ կամք ունենան, եթէ միաբան սիրով անոր յարին, և իրենց բիբսական պէս, իրենց աչքին լոյսին պէս սիրեն և անոր յառաջադիմութեան համար ոչ ինչ, աշխատութիւն, դիտութիւն և նիւթական միջոցներ չխնայեն: Նկատեցէք զայն իբրեւ վառարան և բով ազգայնութեան ուր պիտի զտուին ամէն օտարամուրութիւն և մեր ստրկութենէ յառաջ եկած յուր սովորութիւններ, և իւր հայը պիտի երևի իր յատուկ ազգային հոգւով և հանդամանքով, նկատեցէք զայն իբրեւ մարդարան մ'ուր եկեղեցւոյ համար անոցեաններ և զինուորներ պիտի պատրաստուին, որպէս զի մեր յայտնի և անյայտ թշնամեաց դէմ մտային և բարոյական զօրութիւն ունենանք, որ նիւթական զօրութենէ պէր 'ի վեր է:

«Այս հանդիսիս ներկայ գտնուող աշակերտաց նայելով, անոնց մէջ մեծ աշակերտներ սակաւ, իսկ ծնողքներ սակաւազոյն կ'տեսնեմք. կ'երևի թէ օտար դպրոցներ կ'յաճախեն ունանք և այս բանն ինչ պատճառներ որ ունի, մեզի համար մեծ պակասութիւն մ'է, և պէտք է անմիջապէս դարմանել: Մեծ ամօթ և փաստակար է ազգային դպրոցը թողուլ և օտարին դիմել: Արդէն մեր ազգայնութեան և մարդկութեան պատիւն անարատ պահելու համար պէտք չէ որ օտարէն մտնանք հոգի, սովորութիւն, հագուստ և զանազան ձևեր, որոնք օտարամուրութեան նշաններ են, այլ մեզի պէտք եղածն և մեր դրսէն ընտրածն մեր ազգային հանգամանաց յարմարընելով զործածենք: Եւ այս ընտրութիւնը կարող են ընել և մեր դպրոցներն ու օտարաց դպրոցներէն զերազանցել, եթէ կամենանք: Արդէն մեր ունեցածն ուրիշներէն բարձր է, միայն մեր անսիրելիութիւնն է որ մերը կ'արհամարհենք և օտարաց կ'դիմենք, որով ինքզինքնիս կ'նուաստացնենք այն օտար ազգաց առջև, որ կ'յարգեն և կ'սիրեն այն ազգն որ ազգային պատիւն ու արժանութիւնը կ'ճանչէ, և այս ալ միայն մեր ազգային ընդուն, գրականութեան, պատմութեան և հայկական սովորութեանց ուսմամբ և պահպանութեամբ կ'ընին: Սակայն հայութեան այս կարևոր պայմաններն անգոհնելով ծնողք ունանք օտար դպրոցներ կ'ընեն հայ մանկտին որ օտարութեան մէջ կ'ապրի, օտար զգացումներով կ'ներշնչուի, օտար սովորութիւն և բարք կ'ընդունի և 'ի վերջէ իր ընտանեաց ծոցն օտարացած կ'դառնայ:

«Ուսմանց և գիտութեանց կարևորութեան վրայ չեմ ուզեր երկարօք

ըէն խօսիլ, այլ այսչափ կ'ըսեմ որ մեր կերած նիւթական կերակուրէն
և մեր շնչած օդէն աւելի մեծ կարեւորութիւն ունի մեր բարոյական
անուան, այսինքն ուսումը . որովհետեւ այնչափ դերապան է բարոյա-
կանը նիւթականէն որչափ հոգին առաւել է մարմնէն : Արդ՝ վերջապե-
նելով խօսքս կ'մտալ թեմ որ թէ Ուսումն, խորհուրդն, թէ ազգային
Վարչութիւնը, թէ վարժապետք և թէ մանաւանդ ծնողքն իրենց բո-
լոր մտաբերութիւնը դարձնեն գալոցի վրայ, որպէս զի ունենան ազ-
գային փառք, ազգային պատիւ, ահուն և դեղեցիկ օրինակ լինին նաև
ուրիշ հեռաբնակ ազգայնոց համար, և կ'հայցեմ Աստուծմէ որ ամե-
նուն զօրութիւն և ոյժ տայ որպէս զի իրենց պարտքն անթերի կատա-
րեն և ազգաշինութեան գործին անընդհատ աջակից գտնուին : »*

*Աբշալայ՝ այս ատենախօսութիւնն 'ի լրոյ իմանալով՝ անոր մէջ ծանր
յանդիմանութիւններ գտեր եւ ասկէ առաջ հրատարակեր էր թէ իզմիրցոց
մէկ մասը վիրաւորուել է եղեր Գեր. Մելքիսեղեկ վարդապետի խօսքերէն,
եւ թէ անպատեհ էին անոնք անցաւոր հիւր վարդապետի մը բերանը : Մենք
եւ մեզի հետ շատեր սոյն ատենախօսութեան մէջ Աբշալայ ականակած
սաստը չգտանք, այլ ուսումնասիրութեան եւ ազգասիրութեան յորդորներ.
ուստի ուշիմ ընթերցողին կ'ընդունը դատել թէ մեր Մեծ. պաշտօնակցին
գրածներն արդարացի՞ են, մինչեւ անգամ մարդավարական են : Կան ա-
կանջներ որ գովեստի այնքան սովորած են, որ եթէ ներհակ ականակութիւն
մը լսեն, կ'ոտկուին, կ'զայրանան : Սակայն եթէ մեր յետադէմ վիճակը
պատճառներ ունի, ասանց գլխաւորը շողորթութիւնն է, ինքնահաւանու-
թիւնն է, որ մեզ բարոյապէս կ'սպաննեն : Իրաւի գովեստ չկայ Գեր. Մելք.
վարդապետին խօսքին մէջ, բայց պարսաւ ալ չկայ. ընդհանուր կերպով օ-
տարասիրութենէ յառաջ եկած յուր հետեանքը կ'նշանակէ, ինչպէս որ
մօտ օրերս նոյն վարդապետը, նոյն մոլորութիւնը կ'նշաւակէր Գուպար—
Շահնազարեան վարժարանի հանդիսին օրն ըրած ատենախօսութեան մէջ՝
մեզնէ շատ աւելի բարձր մարդկան ներկայութեան : Մելքիսեղեկ վարդա-
պետն իբրեւ պարզ ճամբորդ՝ եկաւ անցաւ քաղբէս՝ զրեթէ անտես եւ ան-
շուք, ինչպէս կ'անցնին սուտ փայլ եւ բոմբին չսիրող մեծ մարդիկ, եւ իր-
բեւ ճշմարտութեան քարոզ՝ ոչ շողորթութեւ պէտք ունէր եւ ոչ իզմիրցոց
ինքնասիրութիւնը զգուելու : Ինք Լարօնական դատուն եւ Գաղաքական ժո-
ղովոյ յորդորանաց զիջանելով միայն յանձն առաւ նաեւ ամենընտիր քարոզ
մ'ըսել Ս. Ստեփաննոս եկեղեցին, առանց թեմեազոյն ականակութիւն մը
ընելու առաջնորդական խնդրոյն, առանց մեզ յուզող կրից մէջ մտնելու, որ-
պէս զի չկարծուի թէ ինք փառասիրութիւն մ'ունի, եւ ա՛յսքան փափկու-
թիւն, ա՛յսքան համեստութիւն, ա՛յսքան խոհականութիւն, ա՛յսքան ազնուա-
մտութիւն յարգ չգտնելէն զատ Աբշալայ առջեւ . . . թշնամանք կ'ընդունին
անոր կողմէ . . . եւ զարմանք չեն. Աբշալայը՝ ինչպէս անդրանիկ՝ նոյնպէս
եղական է իր կարծեաց մէջ եւ հարկաւ չպիտի սիրէր Գեր. Մելք. վարդա-
պետը, վասն զի այս վարդապետն իր շողորթած կրօնաւարներուն շնմանիր,
եւ այս անոր պատիւ մ'է . . .

Ծ. Խալէ

ՇԱՐԺՈՒՄԸ Ի ԶՄԻՆՈՒՄԸ

Ի սկզբանէ՝ անտի՝ ինչպէս քաղբին՝ նոյնպէս հեռաբնակ հայոց սահմանադրական կեանքը զարմանալի և ուշադրութեան արժանի տեսարան մը կ'ընծայէ։ Ամենունք ժողովուրդը կ'ընդունին Սահմանադրութիւնն որ իրեն իրաւունքներ կ'տայ, հին գլուխներն անդամ դէժառ երեսս անոր առջև կ'ծռին, չէ թէ իբրև ազգային, այլ իբրև տէրունի օրինաց առջև, երիտասարդութիւնն անոր արդիւնքը չտեսնէ իսկ կ'հռչակէ զայն և կ'տօնէ, սակայն երբ գործադրութեան ժամը գայ, պարտք կատարելու դժկամակութիւն և անտարբերութիւն ժողովրդեան կողմէ, անձնական կիրք՝ կուսակցութեանց կողմէ, զմայլելի միամտութիւն կամ վեհերոտութիւն՝ երիտասարդութեան կողմէ, օրինաց տրամադրութիւնները խժբժելու և օրինաւորութեան դէմ աքայցելու խուլ և յամառ միտում հինքերու կողմէ յերեան կ'երևն և Սահմանադրութեան օրինադիրը պատառ պատառ կ'ընեն։ Այնպէս որ երբ իբր արդիւնք ընտրեալ ժողովները կազմուին, ոմանք կ'արժնան և կը հարցնեն թէ՛ զանոնք ո՞վ ընտրեց, և կէսբերան բողոք մը կ'մրմռան, երբ պատրիարք և առաջնորդ իրենց աթոռները նստին, այլք կ'ընեն կ'հարցնեն թէ՛ զանոնք ո՞վ կարդեց դատաւոր, և խուրդի պէս կը խլալին, երբ կենսական խնդիրներ բարձի թողի և իրաւանց դէմ անօրէնութիւններ լինին, գաս մի մարդիկ ալ իբրև հանդիսատես կ'մնան և կ'բողոքեն միայն երբ իրաւէս զգան որ, չէ թէ ընդհանուր այլ մտահաւոր շահ մը վտանգի մէջ է։ Աւստի իրենց բոլոր բարձրութեամբք կ'կանգնին, կ'շարժին, կ'ոստոսան, կուսակիցներ կ'հաւաքեն և կը զանեն, վտան դի նոյն պահուն ամէն որ հիմնաւոր կամ անհիմն ոխ մը կընայ տածել հաստատեալ իշխանութեան դէմ, և այսպէս եղան օրինաւոր կամ ասօրինաւոր կ'տապալեն, մերթ Սահմանադրութեան հզօրն, մերթ գրոյն, մերթ բուռն զօրութեան վրայ յենլով։ Այն տեսն յաղթականները կ'իտոխտան մինչև որ դէր լիւսնեն, վերադարձնող դաշտէն կ'քաշուին բոժ գանձէն ետև՝ կուր վերտալին սկսելու դիտմամբ, պահ մ'անդորրութիւնը կ'հաստատուի, ապա անտարբերութիւնը կ'շարդդէ անգործութեան հետ, մինչև որ նոր գրդիւ մը, նոր ասօրինաւորութիւն մը, նոր կայծ մը գայ և իրաց ու մարդոց կերպար

քանն ու դիրքը փոխէ և ամէն ինչ վեր 'ի վայր տապալէ : Եւ այս սահմանադրական շրջանաւոր տատանումն, որ երբեք իրական օգուտ մը չպիտի բերէ, ինչ պատճառ ունի. ոչ ապաքէն սկզբունքի պակսութիւն, և Սահմանադրութիւնն իբրեւ անսայլմաք առաջնորդ ամէն ատեն բռնելու դժկամակութիւնը : Մեր այս խորհրդածութեանց կ'ըլլային ոչ միայն Ա. Պօլոյ և զանազան զաւառներու մէջ պատահած իրողութիւններն, այլև մեր աչաց ներքեւ քանի՜ քանի տարիներէ վեր անյստի Գարձաճը :

Տաս տարիէ աւելի է որ Սահմանադրութիւնը մուտ գտած է այս տեղ և այս տառնամեայ շրջանին մէջ քանի՜ քանի ժողովներ ու խորհուրդներ իրարու յաջորդած են ըստ մեծի մասին ապօրինի միջոցներով : Գեւ երկու տարի չկայ որ մեր հոգեւոյն Ս. Առաջնորդը կուսակցական խռովութեանց վախճան տալու համար փորձ փորձեց սահմանադրապէս ժողովներ հաստատելու, և այս նպատակաւ ընտրող ժողով մը կազմել տուաւ : Այն ատեն այս ընտրող ժողովին սահմանադրական տնօրէնութիւններն զօրաւոր կուսակցութեան մը քմայ անհաճոյ գալով, օրինաւորապէս ընտրեալ երեսփոխանական ժողովը տապալեց. այն ատեն, այսինքն ճիշտ 1871 յուլիս ամսուն նոր ընտրող ժողով մը կազմուելով՝ արդի Երեսփոխանական ժողովին ծնունդ տուաւ և դժտութեան զաղանի որում մը ձգեց ժողովրդեան մէջ, անոր մեծ մասն ընտրողութեան իրաւունքէն զրկելով. այն ատեն, թէ և երկրորդ ընտրող ժողովը ալ անդամ՝ Ա. Մարտի միջոցաւ բողոքելով սա սողերը կ'զրէինք, «Ընտրող ժողովն (առաջինը) ընտրողութեան իրաւունքը՝ Սահմանադրութեան ներածին չափ՝ ժողովրդեան վրայ տարածելու մտադիր, ճիշտ այն միջոցին որ զործի կ'ձեռնարկէր, նոր Երազէրէ վերաքննութեան ներքեւ տեսնելուն՝ յարմար դատեց նոյնին ընտրողութեան հիմը շոշափել և գէթ 30 զրուշ ազգային կամ պէտքէնի տուրք վճարողն ընտրող համարել : Կա մանաւանդ Սահմանադրութեան մէջ այս կէտը յայտնի չէ լիովին, ըստ որում քանի մը տեսակ տուրք կայ, և այլն . . . » Ահա այսօր մեր բացատրութիւնը կ'արդարանայ և Կեդրոնական Վարչութիւնն 'ի վեր անդը կ'հաստատէ ըսյն, ըստ որում իր Հրահանգով տէրութեան որ և է տուրք, մինչև 10-20 դրուշ վճարողն ընտրող և ընտրելի կ'ճանչէ՝ ըստ հասակի : Ուրեմն մեր գաւառական վարչութիւնը հիմնական թերութիւն մ'ունէր, սա կայն Կեդրոնական այս թերութեան աչք գոցելով զայն վաւերացուց և կրակը ռոխրի ներքեւ ծածկեց : Այժմ դէպքերն՝ որոց շարժառիթը

չենք կամիր քննել, այնպէս բերին որ տոյն երեսփոխանական ժողովն վէճի տակ ընկնի, և այս ուլ իր էութիւնն, եթէ կարող է, հաստատելու համար ճգնի:

Կ'մնայ մեղ համառօտ պատմել քաղերիս մէջ պատահած շարժումն: Գաւառական ժողովին զանգաղ ընթացքը, առաջնորդի ընտրութեան ժամանակ բռնած դիրքն արդէն զանազան դանդաղանոց տեղի տուած էին, երբ մօտ օրերս տեղական կառավարութիւնն՝ Բ. Գրան հրամանին համեմատ քանիցս զրեց աղբուրութեամբ տեղւոյս աղբ. վարչութեան որ քաղքէս գուրս դերեզմանատուն սահմանուի և Առաջնորդ Կ'ընտրուի: Քաղաքական ժողովն, որ ազգային դործերը կարգադրելու մասին դուրս ելնի եռանդ Կ'ունի, յիշեալ խնդիրներն իր ձեռնհասութենէ վեր դատելով Բ. Վալիին հրամանը տեղը տանելու համար՝ մէկ կողմէ ընդհանուր ժողով կ'իշխէ, միւս կողմէ ազգ. Պատրիարքարանէն տեղապահ եպիսկոպոս մի կ'ուզէ: Ընդհ. ժողովն որու երեք թեմական անդամները տակաին ընտրուած չեն, և ութ հոգի ուլ յանկարծ հրաժեշտ տուին, մեծամասնութիւնը չդռնելով անցեալ ամսոյ 21ին ըրած նստին մէջ՝ խնդիրներն անլոյծ կ'մնան և առիթ կ'ստան զասմը աղջայնոց բաղմնութիւ ստորադրութեամբ Տեղական կառավարութեան աղբսաղիբ մը տալով՝ իրաց տարտամ վիճակին իբրեւ միակ դարման Սահմանադրութեան ճշգրիտ գործադրութիւնն ու հետեւապէս արդի ժողովոց վերակազմութիւնը առաջարկել, խնդրելով միանդամայն որ՝ առ ի չղցէ կրօնական զլիսոյ, պաշտօնաւորի մը նախադասութեամբ աղջային ժողով մը դումարուի և պարտ ու պատշաճը անօրինուի: Իսկ Քաղ. ժողովն ալ թողրիբ մը կ'ուղղէ յայտնելով թէ երկու կարևոր խնդիրները լուծելու համար Ս. Պատրիարքի կողմէ քննիչ մը կ'սպասէ, որու նախադասութեամբն դատաւական ժողովին պակաս մասն ալ պիտի ընտրել տայ: Մինչ այս մինչայն ամսոյ 20ին Առևտրական ատենին նախագահ Մեծաշուք Քեամիլ Էֆէնտիի հրաւիրանօք յԱռաջնորդարան կը դումարուին 80—100ի չափ աղջայինք և անոր ատենապետութեամբն ազգ. Սահմանադրութեան անթերի գործադրութեան մասին վիճաբանութիւն սկսելով՝ Գաւառական ժողովոյ ընտրութեան և կազմութեան մէջ սպօրինաւորութիւններ կ'որոնեն, անոր քայքայեալ վիճակն ինկատի կ'առնուն, Քաղ. ժողովին աղջասիրական գործունէութիւնը կ'զովեն և հուսկ ուրեմն նորոյ երեսփոխանական ժողով մը կազմել տուլու պաշտօնով տասն երեք անձանցմէ բաղկացեալ յանձնաժողով մը կ'ընտրեն, որու մէջ քաղաքական ժողովականներէն ալ չորս հոգի կ'զտնուին: Ստոր-

կայն այս որոշման դէմ, որու մասնակից եղան երեսփոխանաց մէկ մասը, Գաղ. ժողովն՝ իբրեւ իրեն վերապահեալ իրաւունք մը՝ կ'որոշէ, հրաժարելոյ տեղը լեցընելու կ'սոստանայ և աղղ. Պատրիարքարանի կողմէ ժողովոյ վաւերացման թղթերը մէջբերելով՝ հիմնովին ինսուրթիւնն որչափ որ կ'մերժէ, նոյնքան յայնձնաժողովին ցուցական մէջ իր անդամաց մեծ մասին անունները կ'տեսնուին։ Ապա Մեծ. Գեամիլ է. Ֆէնտին կ'յայտնէ թէ սոյն ցոցակը Բ. Ալիին պիտի ներկայացընէ որպէս զի Բ. Դբան միջոցաւ աղղ. Պատրիարքարանի հաւանութիւնը քառասուն տէն տալ յայնձնաժողովը կազմուի և դործի սկսի . . . :

Այս անգլ կ'աւարտենք մեր խօսքն և ուշիմ ընթերցողին կ'ընդունի այս շարժման հանդամանքը դառնել և ելրակայութիւն մը հանել։ Այսչափ միայն կ'ըսենք որ, թէ և աղղային պատահական դուժարման մը համար կառավարութեան միջամտութիւնը ինչդերև ստիպողական կարևորութիւն չկար, թէ և Օսմանցի պաշտօնակալի մը նախադաճութիւնն աղղային ժողովի մը մէջ տարագէտ կ'իթուի, սակայն Մեծ. Գեամիլ է. Ֆէնտին զոչաւոր, անհիւսիս և իրաւասէր ընթացքն, իր ներկայութիւնը կարելի եղածին չափ զբաղընել չտալու համար ըրած ձիւղը, երկու կողման սիրոյ և միարանութեան կարգացած յորդորները, և մանաւանդ աղղ. Սահմանադրութիւնը հայէ մ'աւելի յարգելով՝ անոր անթերի գործադրութեան համար նախանշանդրութիւնը, սակայ տէրութեան օրինակը՝ Տէ. Մարք բանալով տաճիւրէն Սահմանադրութեան յօդուածոց դիմել և մէջի ներքեւ ինդիւններ ըստ այնմ լուսաբանելու համար ցոյց տուած եռանդն, և աղղային Պատրիարքարանի զիջիւթութեան դիմելու խոստումն, արդարեւ կ'սքողեն, կ'մոռցնեն քանի մ'անսպասեթութիւններ և ատենապետական աթոռին վրայ հայու մը չէութիւնն անյայտ կ'ընեն։ Սակայն ինչ որ լինի այս շարժման հետեւութիւնը, անհրաժեշտ է Սահմանադրութեան փարիլ, իբրեւ անկողմնակալ իրաւաբանի, լինելիք ընտրութեանց ժամանակ՝ Սահմանադրական Հրահանգին կէտ առ կէտ հետեւիլ, և ամէն անձնական նկատում, ամէն միապետական միտում՝ ի բաց թողլով, ձեռք ձեռքի ետք և աղղային գործոց տնօրէնութեան հետ լուսաւորութեան և յաւաքագործութեան ամէն աղղու միջոցներն ի գործ դնել։

Ամեն Ս. Պատրիարքին կողմէ հասած հեռաղբին համեմատ Եղեւեան Գեր. Յովհաննէս արքեպիսկոպոսն ամսոյն 30ին երկուշաբթի առաւօտուն Անգղիական շոգենաւով հասաւ ի Զմիւռնիա։

ԳԱՂԱԳԱԿԱՆ

Եւրոպայի ուշադրութիւնն մասնաւորապէս Ս ՊԱՆԻՈՅ վրայ դարձած է, ուր ծանրակշիւ իրողութիւններ իրարու կ'յաջորդեն արագօրէն և քաղաքական աշխարհին մոմտուք և հնհնուք կ'ստանձառեն։ Ամենէ թաղաւորին հրաժարումէն 'ի վեր այս երկրին վեճակն երթալով կ'ծանրանայ և վտանգաւոր կերպարան մը կ'առնու։ Պաշտօնէից անընդհատ հրաժարականները, զտապեաներու փոփոխութիւնը, ազգային խորհրդարանին մէջ տեղի ունեցած բիւզանդեան բանակութիւնները, մինչդեռ հայրենիք վտանգի մէջ է, ներքին կուսակցութիւններու ազդադաւ սրահանջումները, ելմտական և վարչական բիւր դժուարութիւնները, դաւադիրներու յայտնի և անյայտ խլրտումները, աստտամբական շարժումներն այսօր պրէթէ կատարեալ անիշխանութեան դուռը բերած հասուցած են ողորմելի Սպանիան, և նորածին հասարակապետութիւնն անկայուն բան մ'ընելով Տօն Գարլօսի յաղթութեան հաւանականութիւններն աւելցուցած են։ Իրօք այս դահամայր իշխանն արդէն Սպանիա մանելով և զայն հողեւաքի մէջ սեպելով յանուն Աստուծոյ և հայրենեաց հիւանդը փրկել կ'իտտանայ իր յայտարարութեան մէջ, թէ և յայտնի է որ իր կուսակցութեան մէկ քունի մասնական յաղթութիւններն աւելի անկլիական և գաղղիական հրադինուց և դրամական նպաստից կ'սրարատուորի քան թէ Մ. Սանթամարուի նման առաջակապետ կղերականներու համրիչներուն։ Մինչդեռ Տօն Գարլօս տոտն հազար աստտամբներով Պիլլաջոյի վրայ կ'քալէ, և Գրանտայէն իբր պատերազմող իողմ ճանչուելու խոստում կ'ընդունի եթէ Իրունը դրաւ և այն տեղ թաղաւոր հրատարակուի, մինչդեռ Գաթալօնիայի, Նաւարարի և Պասկեան դաւառներ արիւնահեղութեանց, յափշտակութեանց և աւերումներու ասպարէզ կ'դառնան, ահա Միջազգային ընկերութեան կարծեցեալ անդամներ, հրձիղներ, մարդասպաններ և դիմակաւոր Գարլօսեաններ վալանս դաւառին մէջ Ալիօ քաղաքը Բարիլի հատարակրդին ոճրագործութեանց կ'մատնեն և մարդկութեան սարսուռ կ'աղբեն։ Գաւառներն ինքնօրինութիւն կ'ուզեն, ազգային միութիւնը կ'խզեն, Անտալուսիան, Մուրսիան ինքնին անկախ հրատարակուելով կեդրոնական կառավարութեան իշխանութիւնը կ'մերժեն։ Արդէն Սէվիլ կ'աշարուի և ռմբակոծ անձնատուր կ'լինի հասարակապետութեան բանակին։ Մատրիտի մէջ կառավարութեան գլուխ Պ. Բի Ի Մարկալ ազատութեան և հայրենեաց բոլոր պաշտպաններն 'ի զէն կ'հրուիրէ բազմադիմի թշնամիները յաղթահար

րելու և աղղային միտ թխնն անվթար պահելու մնօք, սակայն դէպ-
քերու հասարձիկն ինքն ալ կ'ըջուի, իշխանութեան աթոռէն կ'ընկնի և
իրեն կ'յաջորդէ Պ. Սալմերօն երեսփոխանը. խի Ս. Պապն հարկաւ
կ'բերկրի իրաց ընթացքին վրայ և կ'ափովէ անշուշտ այն վիշտն զոր ի-
րեն պատճառեց ԻՏԱԼԻԱՅ խորհրդարանին կրօնական միաբաժնու
թեանց բարձման վրայ հաստատած օրէնքը: Բայց Իտալիա իր վերա-
ծնութեան և քրկութեան դործն ՚ի կտարար հանելու ետէէ է ան-
վրդով: Պ. Մինիէդի նոր պաշտօնէից խորհուրդը կ'կազմէ, այս մասին
բացատրութիւններ տալով, և ներքին բարեկարգութեան համար կա-
րևոր միջոցներն ՚ի դործ դնել խոստանալով: Արեւելեաց պահ մը թէ
կ'աւանդն կարծելով թէ Գրանսան և Աւստրիան ՚ի նպաստ Ս. Պապին
դործելու դաշն գրած են, սակայն այս դաշինք ըստածն այս երկու
տէրութեանց կողմէ՝ Իտալիոյ կառավարութեան ուղղելով լոկ քանի մը
բարեկամական դիտողութիւններ են կրօնական ուխտերու ջնջման մա-
սին: Իտալիա արթուն կ'հսկէ, թշնամիներ ուրեշալը դիտէ և կը
պատրաստուի որ անպէն չմնայ: Թեղ լսեն ՔՐԻՍՏՈՍԻ արդի կառա-
վարութեան կըրտափառ անդամներն և եթէ կ'ուզեն թող հաւանին որ
Տիւբանլու եպիսկոպոսը, և Իւնիէլէրի խմբագիր Պ. Վէյոն թափօրնեն
և ուխտագնացութիւնները քաջալերեն, որպէս զի անդրադիտական ու-
ղին ժողովրդեան մէջ հրահրեն, Սիլվապիան իբր քրկութեան պատգամ
կրօնամոլներու կ'լլել տան, և Պապին աշխարհական իշխանութեան
՚ի նպաստ, այսինքն Իտալիոյ միութեան և Եւրոպայի խաղաղութեան
դէմ խաչակիրներ պատրաստեն: Վօլթէրի հայրենիքն այսօր Լոյօլայի
թուներուն թեկն ածողներ ունի որ Հռոմի և Սպանիոյ մէջ յողմա-
կան կանգնին, և այսպիսիք արդի կառավարութեան կողմէ անսաստ և
անպատիժ կ'ձգուին, կառավարութիւն մ'որ ինքն արդէն աղղային ժո-
ղովին մէջ մայիս 12/24ին կազմուող յետագէմ կուսակցութեան
ծնունդն է: Բայց սոյն ժողովին մեծ մասն բուն Գրանսայի կամքը չներ-
կայացըններ այսուհետեւ, անկից վիժող ծնունդն ալ Վերահաստատու-
թեան ժամանակի կառավարութեան յար և նմանն է կրնայ ըստ իշ:
Պատմութիւնը կ'հաստատէ թէ կրք դիմադրութեան հետեանքը սոս-
կալի է: Վարդլոս Ժ. թագաւորին կառավարութեան յետագիմն թիւը
1830ի յեղափոխութիւնը բերաւ, Լուի Քիլիպինը՝ 1848ի յեղափո-
խութիւնը, և 1852ին աղղային ժողովին մեծամասնութեան յետագի-
մութիւնն ղեկանմբեր 2ի պետական պատահարին և տանտութեան
շարունակող Ներսիական կայսրութեան մը ճամբայ բանալով Գրանսան

անդունդը զլորեցին : Ահա այս տեսակ յետադէմ մեծամասնութեան մը ներքին կ'առաւարկէր այժմ՝ Ֆրանսա , և կամպէզայի սպառնալից և հզօր ձայնին , Յիւլ Ֆաւրիի ամբաստանական հարցումներուն , աղատուէր լրագիրներու գուռու գոչումին և հասարակաց լուստաբը կարծեաց առջին խուլ և անդրայ մնալով՝ այս շինովի և տարասեռ մեծամասնութիւնը բուռն օրէնք կ'դարձնէ՝ ժողովին եռամսեայ հանդիստեան ժամանակ ազատախօս թերթերը բռնահարելու պաշտօնը մնայուն յանձնաժողովցի մը յանձնելով՝ որպէս զի վարչական նոր բռնաբարութիւն մը սլառաստեմ մտնէր : Սակայն ժողովուրդն անհամբեր նոր ընտրութեանց կ'սպասէ որ իր վեհապետական իրաւունքն արժանապէս 'ի գործ դնէ , և այնպիսի հայրենասնուէր մարդիկ երեսփոխանութեան կուգէ , որ իրեն վերականգնութիւն տալէն զատ՝ ճշմարիտ հասարակապետական իշխանութիւն մը տան : Պ. Թիէրի , Յիւլ-Սիմօնի , Ժ. Գաւրի , Կրէվի , Գաղլիմիր Բէրիէի պէս մարդիկ այսօր թշնամանք , նախատինք կ'կրեն նախորդ կայսրութեան հացկատակներու , և սպիտակ դրօշակի սիրահարներու կողմ , սակայն պատմութիւնն օր մը պիտի սոսկայ այս ապերախտութեան առջև և մրցանակ պիտի չնորձէ նախատուող հայրենասիրին և առաքելուն . . . : Եթէ Ֆրանսայի մէջ այժմ ազատութեան լսկ անունը կայ՝ ԲԻՆՏԱՆԻԱ իրական ազատութեան փորձը կ'ապ և վեհ խորհուրդ մը կ'երկնէ նա : Ինչ որ քաղաքական անհաւաններու անուրջ մը կ'երեւի , ինչ որ բնկերային փիլիսոփայից կողմէ իրրեւ խեղճան կատարելութիւն կ'քարոզուի փորձելի ուղէ : Պ. Բիչըրա միջադպային իրաւարարութեան մշտնջենական ատենին մը կազմութիւնը կ'առաջարկէ Հասարակաց խորհրդարանին , և պաշտօնէից գիմադրութեան հակառակ՝ այս մարդասիրական առաջարկութիւնը քուէից առաւելութեամբ բնդունուելէն ետք՝ լօրտ Կրէնվիլ՝ արտաքին գործոց պաշտօնեայն , կ'հրամայուի աբքունուստ միւս տէրութեանց հետ բանակցելու այս ատենին վրայ , ուր պիտի ներկային պատերազմի շարժառիթ մէջ միջազգային վէճերը : Տնք երկին օր մարդկութիւնն արժանի լինէր այսպիսի փրկաւէս հիմնարկութեան մը , և պատերազմի ահաւելի ճիւղն , որ անհամար ազէալից սպաննաւէ , 'ի սպառ վերնարդունէ այն երկիրներու մէջէն , որոնք լուստ որ և քաղաքակիրթ անունը կ'կրեն : Սակայն վեհապետաց փառամուրութիւնը , ժողովրդոց տղիտութիւնը , քաղաքագիտաց սատանայութիւնը , ցեղական դիմամարտութիւնը , զօրաւորին անիրաւութիւնն պիտի եբբէք իրադարձէն այս մեծ խորհուրդը : ԳԵՐՄԱՆԻԱՅ կայսրութեան մեծանուն գիւնապետը

Վ. Հասկին հետ բարեկամական դաշնադրութիւն մը կ'հաստատուէ, ու լու տրամադրութիւններն առևտրական և քաղաքական են: Գերմանիա այս դաշնադրութեամբ իր միջամտութիւնը կ'իստատանայ Պարսկաստանի եթէ իր քրտայնէրուն հետ դժտութիւն մ'ունենայ, ինչպէս հաւանական է որ ունենայ մանաւանդ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ հետ, որ՝ Բօֆման զօրապետին ձեռք արդէն խիլան նուաճած և խանն սնոր անձնատուր եղած է: Ռուս լրագրի մը գրածին նայելով խաղաղութեան պայմաններն են, երկու միլիօն ռուբլի պատերազմի տուղանք, եօթ տարուան մէջ վճարելի. խիլայի անկախութիւնն արդի խանին ներքև. Ամուսարեա գետն իբր նոր սահմանադրութիւն բռնել. նոյն գետին աջակողմեան երկիրներն Պախարայի էմիրութեան կցելն իբրև վարձատրութիւն Էմիրին ըրած ծառայութեանց Ռուսաստանի, արշաւանքին առթիւ, և մահուան պատժոյ ու գերութեան ջնջումը: Եթէ այս պայմաններն Անկլիոյ դժգոհութիւն կրնան պատճառել, գէթ առ այժմ իր տրտունջը պիտի զսպէ քանի որ Ռուսաց Կայսեր միակ աղջիկը Մարի Ալէքսանտրովնա մեծ գլխահին Անկլիոյ Թագուհւոյն երկրորդ որդի՝ Էտիմպերիկ գուքս Ալպէր իշխանին հետ նշանուեցաւ: Իսկ ՀՕԼԱՆՏԱՆ ևս Ալինի Սուլթանին դէմ պատրաստած նաւատորմն արձակեց՝ Վան Սիլիէթնի հրամանատարութեան ներքև, և արդէն Ալինի բոլոր նաւահանդիսաներն ու գետերն սլաշարման վիճակի մէջ գրուեր են: Փոքր տէրութեանց զոյրութեան առաջին պայմանն է պատերազմի բաղլին անսակիլակ հետեւութիւններէն զոյշկենալ և ազգային յառաջադիմութեան տարրերը խաղաղասէր քաղաքականութեան մը մէջ փնտռել: Վկայ է մեր ըսածին ԶՈՒԻՑԵՐԻՆ, Յունաստան և Եգիպտոս: Զուիցերիոյ անդորր հանրապետութիւնը պատերազմ կ'հրատարակէ չէ թէ արտաքին այլ ներքին թշնամներու դէմ, անդրալեռնականութեան դէմ, սոցիալութեան դէմ: Ազգային ժողովը յանձնակիմը յանձնեց դաշնակցական Սահմանադրութեան վերաքննութիւնը: ՅՈՒՆԱՍՏԱՆ խորհրդարանական վէճերով և Լօրիտի հանքաց խնդրով զբաղած է, որոնք Կրետոսի հարստութիւնները կ'իստատանան Պ. Զինկրոսի հաստատած ընկերութեան բաժնորդներուն: Իսկ ԹՈՒՐԿԻՅԱ և ԵԳԻՊՏՈՍԻ նկատմամբ ամենէն կարևոր լուրն է, առաջնոյն երսուն, երկրորդին՝ երսուն երկու միլիօն լիրայի ընելիք փոխառութիւնը, որոց ինչքանի սահմանուած լինելը տակաւին յայտնի չէ:



Երես 264, տող 18 պատէժ բառը պատէժ պիտի կարդացուի:

Ի Վ Ա Ն Օ Է

— Հասաւ իմ Բովէնա սանուհին — հարցուց Աէտրիկ — յուսամ որ զանի երեսի վրայ չախտի թողուն :

— Հայր Աէտրիկ — ըսաւ Աթէլատէյն — խելքդ դուրից բեր : Օրիորդ Բովէնա բնաւ իմ հոգս չտանիր . իմ Ալիֆրիտ աղջականին թաթախանիս աղտիկ մասն աւելի կ'սիրէ քան թէ իմ բոլոր անձս : Ահա ինքն անձամբ կարող է խոստովանիլ : Այո, մի կարմիր, իմ դեղանի աղջականուհիս . ամօթ չէ քեզ բնաւ տրքունական ասպետ մը սիրելի քան թէ դաւաճաբան ֆրանքլին մը, բայց մի ծիծաղիր ըսածիս, Բովէնա, վառն դի դամբանական լաթեր և նիշար դէմք մը, Աստուած դիտէ, որ խնդրածն առարկայ մը չեն : Բայց եթէ կ'փափաքիս ծիծաղել անլրէպ, քեզի լաւադոյն կատակ մը պիտի ընեմ : Տուր ինձ ձեռքդ, կամ լաւ ևս փոխ տուր ինձ, վառն գի լոկ բարեկամի դէմքով զայն կ'խնդրեմ : Լաւ, աստ եկուր, Ալիֆրիտ Իվանօէ ազգականս, 'ի նպատակ քեզ կ'հրաժարեմ այս . . . հէյ, սուրբ Տընսդան վիպ, մեր Ալիֆրիտ բարեկամն աներևոյթ եղեր է, սակայն եթէ իմ աչերս ծոմապահութենէ շլացած չեն, կ'ախտեմ թէ քիչ մ'առաջ զանի այս տեղ տեսայ :

Նոյն միջոցին ամէնքը շուրջ նայեցան և Իվանօէն վնասուեցին . բայց նա աներևոյթ եղեր էր : Ի վերջէ իմացան որ հրէայ մ'եկեր էր զինք փնտռելու, և թէ կարճ բանակցութենէ մ'եսորդ՝ Ալիքթը կոչեր և գլխիկէն հեռացեր էր :

— Գեղանի օրիորդ — ըսաւ Աթէլատէյն Բովէնային — եթէ մտածէի որ Իվանօէ այսպէս յանկարծ անհետ լինելու խիստ ծանրակշիռ սրտածառ մ'ունէր, անմիջապէս իմ իրաւունքս . . . :

Բայց այն ինչ Աթէլատէյն Բովէնայի ձեռքը թողուց Իվանօէի անհետանալն իմանալով, որ օրիորդը՝ իր վիճակը չափազանց շփոթալիկ զտնելով, այս պատեհ առթէն օդուտ քաղեց և սենեկէն դուրս ելաւ շտապաւ :

— Անշուշտ — ըսաւ Աթէլատէյն — կենդանեաց մեջ ամենէն վտանգութեան անարժանեանքն են կիները, 'ի բոց առեալ կրօնաւորներն ու վանահայրերը : Հեթանոս լինիմ եթէ անորմէ չորհակալութիւն և թերեւ համոզուր մը չէի սպասեր : Այս անիծեալ պատանքն անտարաւ կոյս հմայած են, ամէն մարդ խոյս կ'տայ իմ քովէս : Ուստի, քեզի կը դառնամ, աղնիւ Բիշարտ թաղաւոր, նուիրել քեզ իմ հաւատարմութեան ուխտս, զոր իբրեւ աւտոտպետ . . . :

Բայց Բիշարտ թաղաւորն ևս անհետ եղեր էր, և ոչ ոք գիտէր թէ

Քուր գացեր էր։ Աերջապէս իմացուեցաւ որ արտորնօք մեծ գաւիթը գացեր, Խվանօէի հետ խօսող հրէայն իր առջևը կանչել տուեր և քանի մը վայրկեան անոր հետ խօսակցելէն ետև՝ ձի մը բերելու հրամայեր, անոր վրայ աշտանակեր, հրէայն ուրիշ մը հեծնելու ստիպեր էր և այնպէս սանձարձակ ճամբայ ելեր էր, որ՝ Աամպայի խօսքին նայելով, ծեր հրէին մարմինը մէկ ստակի պիտի ընէր։

— Գլուխս վկայ — ըսաւ Աթէլտէյն — որ Զէրնպօք իմ բացակայութեանս ատեն դղելիս տիրացեր է։ Պատահեալով ծածկուած կ'դառնամ, դերեզմանին վրայ տարած յաղթութեանս մէկ նշանակը, և որու որ խօսիմաներեւոյթ կ'լինի երբ իմ ձայնս կ'լսէ։ Բայց անօգուտ է այս բանիս վրայ խօսիլ։ Եկէք, բարեկամներս, այս տեղ մնացողներն թող իմ ետևէս դան խնջոյքի սրահը, առ ահի որ ուրիշներն ալ չփախչին։ Յուսամ որ սեղանը տակաւին զարդարուած է, ինչպէս որ կ'վայլէ սաքսօն հին ազնուականի մը յուղարկաւորութեան, բայց շտապինք, ով գիտէ թերևս սատանան ճաշն կ'յափշտակէ կ'տանի։

Գ Լ Ո Ւ Խ Խ Գ

Այբան իր խղճին վրայ Մօվսրէյի մեղքը ծանրանան,
Որ իր փրփրալից նժոյգին քամակը խորտակեն,
Զիաւորն 'ի կրկէս նետելով գլխի վար,
Իբրև ապիրատ աղաչաւոր։

ԲԻԶԱՐՑ Բ.

Մեր պատմութիւնը կ'ստիպէ մեզ Գէմբլսդոմի դղեակը կամ տաճարատունը դառնալու, այն միջոցին որ Ռեբեկայի կենաց կամ մահուան արիւնալի վիճակը պիտի նետուէր։ Աղմկալի և շարժուն տեսարան մի էր, որպէս թէ բոլոր շրջակայ տեղեաց բնակիչներն գեղջական ժողովի մը կամ դաշտային հանդիսի մը համար գումարուեր էին։ Բայց արեան և մահուան տեսարանի մը հանդիսադիր լինելու եռանդազին փափաքը, այն խաւարին դարերու յատուկ բան մը չէր, թէև մենամարտութեան կամ ընդհանուր նիզակամարտի մէջ մարդիկ այն ատեն սովոր էին արիւնահեղ պայքարներ տեսնել, երբ քաջարի մարդիկնէր մա-

քառելով զիրար կ'սպաննէին : Մինչև անդամ մը օրերն , ուր բարոյա-
կանութեան սկզբունքն աւելի լաւ կ'ըմբռնեն մարդիկ , զլիաւորութիւն
մը , կուսամարտ մը , խռովութիւն մը , կամ արմատական ազատասէրնե-
րու ակումբ մը , միշտ հանդիսատեսներու մեծ ամբոխ մը կ'դուարէ ,
որոնք ամէն վտանգ աչք առնելով , կ'վազեն դուպարին վայրը , թէև շա-
տերն ուղղակի շահ մը չունին տեղի ունեցած դէպքին մէջ , բայց մի-
այն դիտելու համար թէ ինչ դարձուած պիտի առնուն գործերը , և
նոյք պիտի լինին կռուին դիւցազունները կամ վատերը : Հետեւապէս ան-
թիւ բազմութիւն մ'իւր աչքը սեւեռեր էր Գէնթլադովի զոյակին դրան
վրայ , որպէս զի հանդէսը տեսնէ , մինչդեռ մեծագոյն ամբոխ մը նոյն
շէնքին կից ցանկը շրջապատեր էր : Այս ցանկը տաճարատան մօտ շի-
տակ սարահարթ մ'էր զոր յատկապէս հարթեր էին զինուորական և
ասպետական մարզանաց համար : Այս ցանկը ցած և դիւրեւբլրակի մը
վրայ էր , և շուրջ պատնէշներ ունէր , և որովհետև տաճարականները
մասնաւորապէս հանդիսականներ հրաւիրեր էին որպէս զի ասպետա-
կան մարտերու մէջ իրենց ճարտարութեան ականատես լինին , ցանկն
անոնց գործացութեան համար շատ մը պատշգամներով և նստարաննե-
րով զարդարուած էր :

Այս պարագայիս մէջ Մեծ Վարպետին համար դահ մը շիներ էին
կրկէսին արեւելեան կողմը , որ պատուոյ աթոռներով շրջապատուած
էր միաբանութեան հրամանատարներուն և ասպետներուն համար :
Այս ամենուն վրայ կ'սաւառնէր Le beau-Seant անուանեալ նոսիրական
դրօշակը , որ տաճարականաց նշանագիրն էր , և այս անունն իրենց
պատերազմի ազադակն էր : Կրկէսին դիմացի կողմը փայտերու կոյտ մը
կար և գետինն ուժգին մխուած գերանի մը շուրջը այնպէս շարուած
էր որ այրելու սահմանուած զոհին անցնելու ճամբայ մը կ'երևէր , որ-
պէս զի այն մահաբեր փայտակոյտին վրայ երնէ և գերանէն կախուած
կապանքով կաշկանդուի : Այս ահուելի գործիքին մօտ չորս հատ սև
գերլններ կեցեր էին , որոց գոյնն և ափրիկեան կերպարանն , որ այն ա-
տեն քիչ ծանօթ էին Անկլիոյ , ահ ու սոսկում կ'ազդէին ժողովրդեան ,
որ անոնց կ'նայէր իբրև սագաններ , որ պատրաստ կ'գտնուէին իրենց
դիւական պաշտօնը կատարելու : Այս մարդիկ անշարժ կեցեր էին , մի-
նակ ատեն ատեն կ'շարժէին իրենց սթարադիւիին հրամանին համեմատ ,
որպէս զի խարոյկն արծարծեն և նորոգեն : Ասոնք ամբոխին վրայ չէին
նայեր , կարծես թէ զիրենք շրջապատող բաներուն անզգայ էին , և
մինակ իրենց սոսկալի գործը կատարելու մտադիր : Եւ երբ իրարու

հետ խօսելով, իրենց թանձր շրթունքը կ'ընային և սպիտակ ակռաներն երևան կ'հանէին՝ որպէս թէ կանխաւ կ'ժպտէին իրենց սպասած եղբորական տեսարանին, ահաբեկ խուժանն ակամայ այնպէս կարծէին թէ ասոնք արդարեւ այն դերբնային ողիններն են որոց հետ վհուկն հաղորդակցութիւն ունեցած է, և որոնք, իր ժամանակը լրացած լինելով երկրիս վրայ, եկեր էին անոր ահուէլի սպառնալից գործակից դանուելու: Հանդիսատեսներն իրարու կ'փափային և սողանին՝ այն դժբաղդ և խռովայոյղ ժամանակն՝ բրած չարիքն իրարու կ'հաղորդէին, բնականապէս չմոռնալով սատանային պէտք եղածէն աւելի վերադրել:

— Միթէ չտեսնիր, հայր Տէնէդ — հարցոյց գեռաթի գեղացի մը ծերունոյ մը — որ սատանան Գօնինկսպըրկի Աթէլտէյնի մեծ սաքսօն քեղապետին մարմինը յափշտակեց տարաւ:

— Այո, բայց վերջը նորէն բերաւ: Աստուծոյ և սուրբ Տընդանի չորհրդիւք:

— Ի՞նչպէս — հարցոյց վառվռուն երիտասարդ մ'որ ոտիկհիւս կանաչ արձնաւոր մը հաղեր էր. իր ետեւն ուժեղ տղայ մ'ունէր, որ կունակն առեր էր իր տախիւն, և ասով իր կոչումը կ'յայտնէր: Այս վիպասանը գոհհիկ կարգէ չէր երեւր, վասն զի, 'ի բոց առեալ ոսկեթել պճնաղարդ կրկնոցն, իր վիպն արծաթէ շղթայ մ'ունէր, որմէ իր տախիլը լարելու համար բանալին կախեր էր. իր աջ թևին արծաթէ տախտակ մը կապեր էր, որ ըստ սովորու թեան՝ փոխանակ սեպուհի մը նշանադիրը կրելու, որու գերդաստանին կրնար պատկանիլ, մի միայն սա բառը փորագրուած ունէր վրան, ՀԻՐՎՈՒՏ:

— Ի՞նչ կ'խմանաս այդ խօսքով — ըսաւ գուարթերես վիպասանը՝ գեղացիներուն խօսակցութեան խառնուելով: — Եկած եմ քնարիս համար երգի նիւթ մը փնտռել, և խաչ վիպ, գոհ պիտի լինիմ եթէ երկու հատ գտնեմ:

— Ամենուր յայտնի է — ըսաւ գեղացւոյ մեծը — որ Գօնինկսպըրկի Աթէլտէյնը մեռնելէ ետեւ չորս շաբաթի չափ . . . :

— Այդ անկարելի բան է — գոչեց վիպասանը — ողջ առողջ տեսայ զանի Իշպի-ար-լա-Շուշի պայքարին մէջ:

— Եւ սակայն մեռած, աշխարհէս անհետ եղած էր — ըսաւ նորասի գեղացին — վասն զի սուրբ Էտմօնտի կրօնաւորներն անոր համար մեռելոց երդն ըսին, ինչպէս որ ես լուցի, և ասկէ զատ՝ Գօնինկսպըրկի ղղեակը գամբանական ինջոյք մը տեղի ունեցաւ, ինչպէս որ

պարտ էր, և ևս ալ պիտի երթայի այս խնձոյքին թէ որ Գապէլ, Բարբինս, որ . . . :

— Այո, Աթէլտէյն մեռած էր — ըսաւ ծերունին դու ինչ օրերով — և այս մեծ կորուստ մ'էր, վասն զի ստքսօնեան հին արիւնը . . . :

— Բայց ձեր պատմութիւնն ըսէք, բարեկամներ, ձեր պատմութիւնը — պատասխանեց վիպասանը փոքր ինչ անհամբերութեամբ :

— Այո, այո, պատմէ մեզի սա պատմութիւնն — ըսաւ ըստ կարգի խոշոր վանական մ'որ անոնց մօտ կ'կենար զաւազանի մը կռթնած, որ կէս մ'ուխտաւորի ցուպին և կէս մը վերդի կ'նմանէր, և հաւանօրէն երկուքին պաշտօնն ալ ըստ պարագայից կ'կատարէր — ձեր պատմութիւնն ըսէք — յարեց կորովի կրօնաւորը — պարսպ տեղ օրը մի անցընէք, վասն զի պէտք չէ որ ժամովաճառ լինինք :

— Եթէ այդպէս կ'հաճի ձեր վերապատուութիւնն — յարեց Տէնէդ — զինով քահանայ մ'եկաւ սուրբ Կամօնտի լոսարարին այցելութեան . . . :

— Իմ վերապատուութեանս անհաճոյ է — պատասխանեց կրօնաւորն — որ զինով քահանայի պէս կենդանի մը գտնուի, և եթէ իրօք այդպիսի քահանայ մը կայ, չեմ ախորժիր որ աշխարհական մ'այդ կերպով խօսի անոր վրայ : Քիչ մը մարդավար եղիր, բարեկամ, և առնոր վիճակէն սա հետեցուր որ այն սուրբ մարդը խորհրդածութեան մէջ թաղուած էր որով դու խը կ'դառնար և ոտները կ'երեւային այնպէս որպէս թէ նոր զինի խմած լինէր, ևս ինքս այդ բանը փորձով զիտեմ :

— Իսկ ուրեմն — պատասխանեց հայր Տէնէդ — սրբալիցն քահանայ մ'եկաւ սուրբ Կամօնտ լոսարարը տեսնելու, այս այցելուն տեսնելի մը դաշտաբնակ քահանայ էր որ ինք մինակ անտառին մէջ գողցուած եղջերուներուն կէսը կ'սպաննէ, որ գարեջրի սրուակին խոխոջումն աւելի կ'սիրէ քան թէ իր մենաստանին նուիրական զանգակը, և կարծէ թէ երշիկի մը կտորն իր աղօթագրքին տասն երեսը կ'արժէ . . . մէկ խօսքով, պատուական, զուարթերես մարդ մ'է, որ զաւազան մը շարժել զիտէ, աղեղ լարել, և Եօթի նահանգի որ և է բնիկէ լաւ ևս կ'սպարէ :

— Այս վերջին խօսքդ, Տէնէդ — ըսաւ անոր վիպասանը մեղմիկ — մէկ քանի կողերդ ազատեց :

— Այո, չեմ վախնար իրմէ, մարդ — ըսաւ Տէնէդ — ես փոքր

ինչ ծեր և ծանր եմ, բայց երբ խոյն և զանգակին հաւար 'ի պայքար ելայ Տօնգաստրի մէջ . . . :

— Բայց պատմութիւնը, պատմութիւնն ինչ մնաց, բարեկամ — ըսաւ վերստին վիպասանը :

— Լաւ, աւասիկ այս է պատմութիւնը . Գօնինկսպըրկի Աթէլստէյն 'ի սուրբ Էտմօնտ կ'իթաղուէր . . . :

— Սուտ է այդ, անձողի սուտ մը — ըսաւ կրօնաւորը — վասն զի ես տեսայ որ զինքն իր Գօնինկսպըրկի յատուկ դղեակը կ'տանէին :

— Լաւ, եթէ պատմութիւնը զիտես, դու ինքնին պատմէ, տէր իմ — ըսաւ Տէնէդ, իր կամակոր դիմախօսին կողմը դառնալով սրտնեղութեամբ . և զեղացին դժուարաւ յանձն առաւ իր պատմութիւնը շարունակելու՝ վիպասանին խնդրոյն համեմատ : — Այս երկու Ժողովուրդներն — ըսաւ նա վերջապէս — քանի որ այս վերապատուելի մարդը կ'փափաքի որ այսպէս կոչուին, իրենց աղւոր դարեջուրը, զինքն և ուրիշ ըմպելիներ խմելու ետեւէ էին, զրեթէ բոլոր ամառուան օր մը, երբ խորունկ հեծեծանքի և շղթաներու ձայն մը պարկաւ իրենց ականջին և մեռնող Աթէլստէյնի դէմքը սենեակը մտաւ, ըսելով, Գուք թշուառական հովիւներ . . . :

— Սխալ է — զոչեց կրօնաւորը շուտով — նա բնաւ բառ մը չըսաւ :

— Հօ, հօ, Դըք եղբայր — ըսաւ վիպասանը զանի մեկուսի քաշելով — նոր նապատտակ մը երեւան ելաւ՝ ըստ երևոյթին :

— Ա'հաւաստեմքեզ, Ալան-է-Տէլ — ըսաւ ճգնաւորը — ես Աթէլստէյնը տեսայ ինչպէս որ մարդ կ'տեսնէ մարմնաւոր աշօք կենդանի մարդ մը . պատանքը վրան էր և չորս գլին զերեզմանի հոտ կ'բուրէր . տակաւ մը զինի անգամ չսիտի ջնջէ անոր տեսքն իմ յիշողութենէս :

— Վահ — պատասխանեց վիպասանը — դու ինձի հետ կատակ կ'ընես :

— Գարձեալ մի հաւտար ինձ — ըսաւ կրօնաւորը — բայց այս իրաւ է որ գաւազանի հարուած մը տուի անոր որ բաւական էր կով մը տապալելու, և սակայն գաւազանս վրայէն սահեցաւ որպէս թէ ծխոյ սիւն մը լինէր մարմինը :

— Սուրբ Հիւսթըրդ վիպ — պատասխանեց վիպասանը — հրաշալի պատմութիւն մ'է և հին եղանակի մը վրայ ոտանաւորի դարձրնելու արժանի է : Տրամ-Բիւնը համակեց Ժերմանի ճգնաւորը :

— Ծիծաղէ՛, որչափ կ'ուզես — ըսաւ Դրբ կրօնաւորը — բայց եթէ երբեք այսպիսի նիւթի մը վրայ խօսիլս լսես, թող կրողը զիս հետը տանի։ Ո՛չ, ո՛չ, իսկոյն միտքս դրի լաւ գործի մը աջակից գտնուիլ, ինչպէս վճուկի մը պրման, դատաստանական պայքարի մը, կամ ասոր նման բարեպաշտական ձեռնարկութեան մը, և ահա այս պատճառաւ այս տեղ եկայ։

Երբ այսպէս կ'խօսէր, Դէնրլսդուի սուրբ Միշէլ եկեղեցւոյն ահա դին զանդակը, շէնք մ'որ պատկառելի և տաճարատունէն քիչ մը հեռի գեղի մը մէջ շինուած էր, անոնց վիճարանութեան վերջ տուաւ։ Տխուր ձայնը հետզհետէ ականջի կ'ղարկէր, բաւական միջոց թողլով որ իւրաքանչիւր հնչիւնն հեռաւոր արձաղանքով մը մարի, դեռ ահանջն երկաթէ զանդակին հնչումէն չլցուած։ Այս ձայներն որ մօտալուտ արարողութեան նշաններն էին, բոլոր դումարուած ամբոխին սիրտն արհաւրօք կ'ընուին, որոց աչքը նոյն պահուն դէպ 'ի տաճարատունը դարձած էր, ուսկից պիտի ելնէին Մեծ Վարպետը, ախոյեանն ու յանցաւորը։

Ի վերջէ շարժական կամուրջն ընկաւ, դռները բացուեցան, և ասպետ մը՝ Ուխտին մեծ դրօշակը կրելով, զղեկէն դուրս ելաւ. առջևէն ունէր վեց փողար, և ետևէն տաճարականներ որ զոյգ զոյգ կ'ընթերին. 'ի վերջէ Մեծ վարպետը հասաւ, փառաւոր նժոյգի մը վրայ հեծած, թէև անոր կազմածը շատ պարզ էր։ Ասոնցմէ ետքը կ'դար Պրայն տը Պուա Նիլլէր. ոտքէն ցղլուխ փայլուն սպառազինութիւն մը հագներ էր, բայց առանց նիզակի, վահանի և սուրի, զոր իր ետևէն եկող երկու զինակիրներ կ'կրէին։ Իր դէմքը թէև ծածկուած էր սաղաւարտին վրայ ծածանող փետուրով մը, բուռն պլայլութիւն մը կ'այայտնէր, և կարծես գոռողութիւնը կ'մաքառէր անհաստատամտութեան հետ։ Մեռելափայ գունատութիւն մը կ'երևէր երեսին վրայ, որպէս թէ դիշերներ անքուն անցուցեր էր, սակայն իր երիվարին ճախրը կ'չափաւորէր Տաճարական ուխտին ամենէն ընտիր ասպետի մը սովորական հեշտութեամբ և վայելչութեամբ։ Իր ընդհանուր կերպարանը վէս և հրամայական էր, բայց ուշադրութեամբ նայելով դիւրին էր տեսնել անոր դէմքին վրայ այնպիսի երևոյթ որմէ մարդ իր աչքը դարձնելու կ'ստիպուէր։

Իր երկու կողմը կ'ստնուէին Գօնրատ Մօնֆիշէ և Ալպէրդ Մալվուազէն, որոնք ախոյեանն իբրեւ կնքահայր կ'որոճէին։ Խաղաղութեան զգեստը հագեր էին, այս է Ուխտին սպիտակ հաղուստը։ Իրենց ետե-

ւէն կ'գային Տաճարի միւս ասպետները, բազմաթիւ զինակիրներու և սպասաւորներու ընկերակցութեամբ, որ սևեր հագեր էին և օրին մէկն Գլխաւոր ասպետները դառնալու հետամուտ էին: Այս նորոնձա- ներէն ետք՝ հետեակ սահակներու խումբ մը կ'յառաջանար, որոց մէջ տեղն ամբաստանելոյն դունատ գէմէր կ'երևէր, որ ծանր այլ անվահեր քայլով կ'դիմէր գէպ 'ի այն վայրն ուր իր բազը պիտի վճռուէր: Ռեբեկան իր զարդերէն մերկացուցեր էին, վախնալով որ թերևս անոնց մէջ կ'գտնուի այն հմայեկներէն մին զոր, ինչպէս կ'կարծէին, Սաղանը կ'ընծայէ իր զոհերուն որպէս զի խոստովանութեան կարողութենէ զա- նոնք զրկէ՝ նոյն իսկ տանջանայ ժամանակ: Իր արևելեան հագուստնե- րուն տեղ՝ հազուեցուցեր էին զինքը սպիտակ պարեզօտ մը խիստ պարզաձև, այլ դարձեալ իր նայուածքին մէջ այնպիսի արիւթութեան և համբերութեան անուշ բացատրութիւն մը կար, որ մինչև անգամ իր անզարդ հագուստովը, և մի միայն իր երկայն սևաթոյր մնալերով ա- մենուն աչքը կ'զրաւէր, ամենուն լոցը կ'շարժէր, ամենէն մոլեռանդ խտտակոծնը կ'ողբար այն աղջկան ճակատադիւրն որով սիրասուն էակ մը Սաղանի մէկ փնասակար գործիքն ու դերին դարձեր էր:

Ստորին կարգէ ամբօխ մը զոհին կ'հետևէր, ամենքը մեծ Տաճարու- տան վերաբերող կարգ ու կանոնով կ'քալէին, թևերը ծալլած և աչ- քերը զետիւն սևեռած:

Այս ծանրաքայլ թափօրը գէպ 'ի բլրակը դիմեց որու կատարը շի- նուած էր ցանկը, և կրկէսը մանկելով անոր շրջանն ըրաւ աջ կողմէն գէպ 'ի ձախ կողմը. և երբ այս շրջանն աւարտեց, դադար առաւ: Այն ատեն պահ մը վրդովում տեղի ունեցաւ, մինչդեռ մեծ վարպետն և բոլոր իր հետևորդները, 'ի բաց առեալ ախոյեանն ու իր կնքահար- քը, վար իջան ձիերէն զորս զինակիրներն՝ որ ներկայ էին, խօսոյն կրկէսէն դուրս առին տարին:

Անբաղդ Ռեբեկան սևադոյն աթուռի մը տարին, որ փայտակոյտին մօտ էր: Ռեբեկա առաջին անգամ իր աչքն ածելով այն վայրն ուր պատրաստութիւններ եղեր էին՝ որչափ մոտաց հաշարկու նոյնչափ մար- մնոյ տաժանելի մահուան մը համար, դող մ'զգաց և աչքը գոցեց, անտարակոյս ներքուստ աղօթելով, վասն զի իր շրթունքը կ'շարժէին թէև ձայն մը չէր լսուէր: Պահէ մ'իր աչքը բացաւ, անթարթ դի- տեց խարոյկն որպէս թէ իր միտքն այս առարկային հետ ընտելացնէ, և ապա իր գլուխն անդին դարձուց ծանր և բնական կերպով:

«Եյն միջոցին՝ Մեծ Վարպետն իր աթուռը նստեր էր. և երբ Ռեբեկան

ասպետներն իր շուրջը կեցան՝ իւրաքանչիւրն իր յատուկ կարգին, փողերու բարձրագոյն և երկայն շունդ մը ծանոց որ ատենանք բացուած է դատաստանի համար: Այն ատեն՝ Մալվուազէն՝ ընդ առաջ քալեց և հրէտ-հիւն ձեռնոցն՝ որ մենամարտին դրան էր, Մեծ վարպետին օտից ներքև դրաւ:

— Արիասիրտ տէր և վերապատուելի հայր — ըսաւ նա — անհաւատիկ Պրայն տը Պուա Վիլյէր քաջ ասպետն՝ որ՝ ձեր ոտից ներքև դրուած պատերազմի դրան ընդունելով, իր պաշարը կատարելու խոտտացաւ այսօր, հաստատուելու համար որ այս հրէայ օրիորդն՝ Ռեբեկա անուն, Սիօնի Տաճարի ուխտին կողմէ արձակուած վճռոյն իրաւամբ արժանի դատուած է, վճիռ մ'որով դատապարտուած է այս օրիորդին իբրև վճռիկ այրելու: աստուծոյ ըսի Պրայն այս տեղ կազմու պատրաստ է սրատուաւոր կերպով և իբրև քաջասպետ մարտը մղելու: Եթէ այս է ձեր սուրբ և աշխու կամքը:

— Միթէ երգում ըրնաւ — հաբցուց Մեծ վարպետն — որ իր դասն արդար է և պատուաւոր: Բերէք Խաչախայան և Te igitur:

— Վերապատուելի հայր — ըսաւ Մալվուազէն արտօրնօք — մեր եղբայրն արդէն երգմամբ հաստատեց ամբաստանութեան ճշմարտութիւնն Գօնրատ Մօնֆիշէի սուշև, և պարտաւոր չէ ուրիշ երգում մը ալ ընել, քանի որ իր հակառակորդն անհաւատ մ'է, և չկրնար երգման ենթարկուիլ:

Այս բացատրութիւնը դոհացուցիչ երեցաւ Պօմանուարի, 'ի մեծ ուրախութիւն Ալլիքտի. վասն զի նենդամիտ ասպետը դուշակեր էր մեծ դժուարութիւնը, կամ լաւ եւ՝ Պուա Վիլյէրը՝ նոյն մեծ ժողովն սուշև երգմանցիւնը անկարելիութիւնը, և այս հնարը մտածեր էր որպէս զի երգում առնել տալու հարկը վեցերնէ:

Մեծ վարպետն այն ատեն հրամայեց որ քարոզ մ'առաջանցնի և իր պարտաւորութիւնը կատարէ: Փողերը վերստին հնչեցին, և քարոզ մը յառաջանալով, բարձրաձայն հրատարակեց. — Ահա աստ կ'կանգնի պատրաստ Պրայն ասպետը՝ որ և է ազատ ասպետի մը հետ մաքառելու համար, որ պիտի յանձն առնու Ռեբեկա հրէայ օրիորդին կողմէ 'ի պաշար ցալ, իբրև ախտեան, և Մեծ վարպետն՝ որ աստ ներկայ է, բայ ասպարէզ մը պիտի թողու անոր, և հաւասար հով և արև պիտի շնորհէ, և ամէն ինչ որ զինուց հաւասարութիւնը կ'ապահովէ: — Փողերու ձայնը նորէն հնչեց, և քանի մը վայրկեան հանդիսաւոր լուծիւն մը տիրեց:

— Աշաշառ որ աղջկան համար ասիական մը չեղևիր — ըսաւ Մեծ Վարդապետը : — Պատգամաւոր , զնա հաբցուր անոր եթէ կ'սպասէ անա՛ ձի մ'որ իրեն համար մենամաքան լաւ պիտի գայ :

Եղին պահոհոն պատգամաւորը սոս աճալ խօսեցաւ Ռեբեկայի .

— Օրիորդ , պատուաբժան և վեհապատու ելի Մեծ Վարդապետը կը հաբցինէ քեզ , թէ ունի՞ս պատգամաւոր ասիական մ'որ այսօր քու կողմէդ 'ի պայքար և ընէ , թէ ոչ անձնատուր կ'լինիս ճակատադրիդ , հնաւտալով որ արժանապէս մահոտան դատապարտուած ես :

— Ըսէ Մեծ Վարդապետին — պատասխանեց Ռեբեկա — որ իմ անա՛ մեղով թեանս վրայ կ'սնդեմ , և զիս դատապարտող վճիռն արդար չեմ ճանչեր , վախճալով որ իբրև ինքնասպան մեղաւոր չլինիմ : Ըսէ անոր որ օրինաց ներածին չափ պայմանաւած կ'լինդեմ , յուսալով որ թերևս Աստուած , որու օգնութիւնն յետին վայրկեանն մեզ կ'հասնի , պիտի հաճի աղատարար մ'առաքել ինձ , և երբ այս յետին պայմանաւած լըմնայ , թող իր սուրբ կամքը կատարուի :

Պատգամաւորին այս պատասխանը Մեծ Վարդապետին հաղորդեց :

— Աստուած չընէ — ըսաւ Պօմանուար — որ հրէայ կամ հեթանոս առիթ ունենան մեզ անիրաւութեամբ ամբաստանել : Մինչև որ երեկոյեան սառեւոյններն արև մտաքէն , յաբեկս դառնան , պիտի սարսենք տեանելու համար թէ արդեօք այս դժբաղդ աղջկան 'ի պաշտպանութիւն ախոյեան մը պիտի երևան դնայ : Այս պայմանաւած ան աւարտելէն ետև թող մահոտան պատրաստուի :

Պատգամաւորը Ռեբեկային կրկնեց Մեծ Վարդապետին խօսքը , որ իր դուխը խոնարհեց հըռութեամբ , թեւերը ծալլեց , և գէպ 'ի երկին նաշելով , կարծես թէ վերուստ կ'յուսար օգնութեան մը զոր հազիւ ուրեմն կ'համարձակէր սպասել մարդկան ձեռք : Այս սոսկալի ակնկալութեան միջոցին , Պուա Նիլպէր՝ որ յանկարծ Ռեբեկայի մօտ վաղեր էր՝ Մեծ Վարդապետին թոյլտուութեամբ , իր ձայնը հնչեցուց օրիորդին ականջին , փախուք մ'էր այն , և սակայն այս ձայնն աւելի դողազոյնց անոր քան թէ պատգամաւորին հրաւերը :

— Ռեբեկա — ըսաւ տաճարականը — միթէ կ'լսես ձայնս :

— Ես քեզնէ ոչ ինչ չեմ սպասեր , անագորոյն և քարաքիտ մարդ — ըսաւ տարաբաղդ օրիորդը :

— Այո , բայց միթէ իմ ձայնս չես լսեր — ըսաւ տաճարականը — վառն զի իմ ձայնիս հնչիւնն իմ յատուկ ականջիս անպամ հաշուելի է : Ես ևս հազիւ ուրեմն գիտեմ թէ ուր կեցած եմ և ինչ պատճառաւ բե-

բաժնէն մեղ այս տեղ: Այս կրկէսը, այս աթոռը, այս փայտակոյտը . . . գիտեմ թէ ինչ բանի կ'դորժած են, այլ սակայն այս ամէնն իբրեւ եւրաղ կ'երևի ինձ, իբրեւ ահուելի աչօք տեսիլ մը, որ իմ զգայաբանքս կ'ահաբեկեն իրենց ահարկու պատկերով, բայց բանականութիւնս չեն համարեր:

— Իմ զգայարանքս և միտքս հաւասարապէս համոզուած են — պատասխանեց Ռեբեկա: — Ա՛րքեն ինձ որ այս խորոյն իմ երկրային մարմնիս տոգորելու և իմ առջևս վշտալի այլ կարճ ճամբայ մը բանալու սահմանուած են գէպ ՚ի լուսադոյն աշխարհ մը:

— Ատոնք ցնորք են, Ռեբեկա, ցնորք — պատասխանեց տաճարականը — տարտամ երազներ են, զորս նոյն իսկ ձեր իմաստուն Սաղուկեցիին կ'մերժեն: Միտ դիր ինձ, Ռեբեկա — ըսաւ նա աւելի ևս բորբոքելով — սա անորէն մարդոց քեզի պատրաստած ճակատադէն լաւագոյն ճակատադիր մը, աղատութիւն և կեանք ունենալու առիթ մը ունիս ձեռքդ, եթէ կամենաս: Հեծիր տու ձիուս գաւաղը, այս Զաճիքի վրայ, ամէն հի երկվար՝ որ երբեք իր տիրոջ չանաստուեր: Տրապիզոնի Սուլթանին հետ մենամարտելով շահեցայ զայն, հեծիր, կ'ըսեմ քեզ, և մէկ ժամէն ամէն հալածանքէ ղերծ պիտի մնանք . . . ուրախութեան նոր աշխարհ մը սլիտի բացուի առջևդ, և ինձի համար համբաւոյ նոր տապարէլ մը: Թող ասոնք իմ գատավճիռս արձակեն, կ'անդուսնեմ զայն, թող Պուա-Վիլլէրի անունը վանական ստրուկներու ցանկին սրբեն: Արեամբ պիտի լուամ իմ զրահին վրայ ինչ արատ որ ձգելու յանդգնին:

— Քաշուէ դնան, փորձիչ սատանայ — ըսաւ Ռեբեկա — կորկ'ր. այս ծայրագոյն վիճակիս մէջ մաղի չտի անդամ չես կարող խախտել իմ գիտաւորութիւնս . . . թէ և թշնամիներէ շրջապատուած եմ, սակայն քեզ իմ ամենէն վատ և անհաշտ թշնամիս կ'համարիմ . . . յանուն Աստուծոյ, հեռացիր, գնան:

Մարվուադէն այս բանակցութեան երկարատևութեան վրայ վրդուվելով, առաջ անցաւ որ զայն ընդհատէ:

— Միթէ օրիորդն իր յանցանքը խոստովանեցնաւ — հարցոյց նա Պուա-Վիլլէրի — թէ ոչ միշտ կ'ուրանայ:

— Միշտ կ'ուրանայ — ըսաւ Պուա-Վիլլէր:

— Ուրեմն — ըսաւ Մարվուադէն — պարտաւոր ես, աղիւ եղբայր, առաջին տեղդ երթալ և դորժին վախճանին սպասել: Ժամեք կ'ոնցնին, մութ կ'սկսի . . . արբի, քաջդ Պուա-Վիլլէր, եկիւր, գու որ մեր Ռախմէն յոյսն ես և քիչ ատենէն անոր վրէպը պիտի դառնաս:

Այս մեղմ ձայնով խօսելու ատեն՝ Մալվուզէն ասպետին ձիուն սանձին երկնցուց ձեռքը, որպէս թէ զանի իր տեղն առաջնորդել կ'ուզէր :

— Այիրատ — զօչեց Պուա—Աիլպէր սրտմտութեամբ — Ընչպէս կ'յանդգնիս ձեռքդ երկվարիս սանձին տանիլ : — Եւ ապա իր ընկերին բռնէն աղատելով կրկէսին միւս ծայրն արշաւեց :

— Տակաւին արեական հուր ունի — ըսաւ Մալվուզէն Մօնֆիշէի — Եթէ այս եռանդը լաւ ուղղէ . . . բայց յունական կրակին սէտս, ամէն դպած բաները կ'այրէ :

Գատառններն արդէն երկու ժամէ վեր կրկէսն էին, ընդ ունայն սպասելով որ ականջան մ'երևի :

— Եւ այս բանիս համար օրինաւոր պատճառներ կան — ըսաւ Գըք կրօնաւորը — վաճն զի օրիորդը հրէուհի մ'է . բայց դարձեալ, իմ կարդիս վրայ կ'երգնում, որ մեղք պիտի լինի որ այսպէս նորատիւ և գեղանի աղջիկ մը կ'սրնչի առանց սնոր 'ի նպատակ հարուած մը տալու : Եթէ տաճն անդամ վճռի լինէր, փոյթ չէր, հէրիք էր որ քիչ մը քրիստոնէայ լինէր, այն ատեն իմ գտաւորսնս սա զոռող ասպետին զլիւռն պիտի իջեցնէի :

Նոյն պահուն՝ ասպետ մը սանձարձակ վարելով իր երկվարը՝ դաշտին վրայ երեցաւ և կրկէսին կողմը զիմեց : Հարիւրաւոր ձայներ դուռնցին . — Ախոյեանս մը, ականջանս մը : — Եւ ժողովուրդն՝ իր նախապաշարմանց չնայելով՝ ցնծութեան աղաղակներով բարեկց այս ականջեանն երբ կրկէսը մտաւ : Սակայն երկրորդ անգամ նայելով այս նորեկ ասպետին վրայ՝ ամէնքն այս սրտեհ գալստենէ յղացած յղիւսքը կորուսին : Վաճն զի նորեկ ականջեանն ձին՝ որ սնդուլ արշաւելով շատ մղրներ տուր էր, յոյնութենէ կարծես թէ կ'երեւոր, և ձիավարն որչափ որ կրկէսը մտաւ մեծ յանդիմութեամբ, տկարութիւն սեպէ կամ յոյնութիւն կամ այս երկու պատճառները միասին, հաղիւ ուրիմն թամբին վրայ կենալու կարող կ'երևէր :

Պատգամաւորին կողման վրայ, որ նորեկ ականջեանին կարգը, անունն և նպատակը կ'հարցնէր, օտար ասպետը շուտ և համարձակ պատասխանեց : — Էս բարի և արնիւ ասպետ մ'եմ, աստ է կայ որ նիւստիւմ և սրով այս Ռեբեկա, Եօքքիլ Իւահակին աղջկան դատար պաշտօնակն մ, յայտ աւնեմ՝ որ, սնոր զէմ արձակուած վճխը սոտ է և զրպարատա կան, և 'ի մենամարտ կռիւմ Պրայն ար Պուա—Աիլպէրը, իբրեւ մատնիչ, մարդասպան և թախսոս, և այս ամէնը աս դաշտին մէջ պիտի

Հաստատեմանոր հետ դէմ առ դէմ մարտերով Աստուծոյ, Յիբամօր
և սուրբ Գէորգ ընտիր ասպետին օգնութեամբը :

— Ամենէն առաջ հարկ է — ըսաւ Մարութազէն — որ օտարականը
հաստատէ թէ ընտիր և տոհմիկ ասպետ մ'է : Տաճարը չթողուր որ
իր ախոյեաններն անանուն մարդոց դէմ կռուին :

— Իմ անունս — դոչեց ասպետն իր սաղաւարտին երեսպահը վերցը-
նելով — լաւ ևս ծանօթ է, իմ առհաս Քուկինէդ աւելի մաքուր է,
Մարութազէն : Ես Վիլքրիտ Իվանօէն եմ :

— Ես այս պահուս չալտի կռուիմ քեզի հետ — ըսաւ տաճարակա-
նը՝ տխուր ու այլայլած ձայնով մը — զնա բռնեց լուր վէրքդ, լաւա-
դոյն երկվար մը գտիր, և թեքես այն առեն զիջանիմ քու տղայական
անապարձութիւնդ պատժելու :

— Ա՛հ, գոռոզ տաճարական — ըսաւ Իվանօէն — միթէ մոռցմբ որ
երկու անգամ տապաւն ընկար այս նիզակին ներքէ : Յիշէ Աքիսյի
կրկէաները, յիշէ Եշլիի նիզակամարտը, յիշէ Ռօթերփուտի սրահնե-
րուն մէջ քու մեծաբանութիւններդ, և քու ոսկի շղթադ զբաւ զնեղ
իմ մասնադանիս (reliquary) դէմ, որպէս թէ Վիլքրիտ Իվանօէն
հետ պիտի մնամարտիս կորուսած պատիւդ դանելու համար : Այս
մասնադանիս, և անոր պարանախող մասունքին վրայ կ'երգնում քեզ
վատ հռչակելու Եւրոպայի ամէն արքունեաց մէջ, քու Ռւստիդ ամէն
ժողովարաններու մէջ եթէ անմիջապէս ինձի դէմ չմնամարտիս :

Նախ Պուա — կիլլէր իր դէմքը դէպ 'ի Ռեբեկայի դարձուց վարա-
նոտ կերպով մը, և ապա դոչեց զայրադին նայելով Իվանօէնի. — Ըուն
սաքսօն, նիզակդ առ և մահուան պատրաստուէ :

— Արդեօք Մեծ Աւարպետը կ'ներէ ինձ պատերազմիլ — հարցոյց
Իվանօէն :

— Չեմ կրնար մերժել — պատասխանեց Մեծ Աւարպետը — եթէ
այս աղջիկը քեզ իբրեւ ախոյեան կ'ընդունի : Սակայն կ'փախաքի որ
կռուելու վիճակի մէջ զսնուէիր : Միշտ մեր Ռւստին ընչամօն եղած
ես, սակայն քեզի հետ պատուաւոր կերպով վաբուելու կ'փափայիմ :

— Այս, այս վիճակիս մէջ մտքաւիլ — կ'տգեմ, և չէ թէ ուր շէր-
ալով — ըսաւ Իվանօէն : — Այս է Աստուծոյ պատասխանը, անոր
պահպանութեան կ'ապաւինիմ : Ռեբեկա — ըսաւ նա դէպ 'ի մահա-
բեր աթոռը քնելով ձին — միթէ զիս իբրեւ ախոյեան կ'ընդունիս :

— Այո, կ'ընդունիմ — ըսաւ նա այլայլութեամբ մը զոր մահուան
երկելը չէր զրգուած անոր վրայ — կ'ընդունիմ քեզ իբրեւ երկնուստ

ինձ զրկուած ակոյեան մը : Բայց, *հէ, հէ, վէրքդ բուժուած չեն, մի կրուիր այս անդուծ մարդուն հետ, ինչո՞ւ համար դու ես ինձի հետ մեռնիս :*

Բայց Իվանօէ արդէն իր որոշեալ տեղն էր, իր երեսպահը գոցեր և նիղակն առեր էր : Նոյնն բրաւ և Պուա—Նիլլէր, և իր զինակիրը դիտեց՝ երեսպահը կապելու ատեն որ իր դէմքն, իր զգացած այլայլութեանց հակառակ՝ բոլոր առտու մոխրի զոյն առեր էր, յանկարծ սաստիկ կարմրեր էր :

Այն ատեն՝ պատգամաւորն ամէն մէկ ակոյեան իր տեղը կեցած տեսնելով, ձայնը բարձրացուց, և երեք անգամ կրկնեց. *«ԲՆՆ ասպետ»* ներ, յեր պարտէ Կապարեցե՛ք : Երրորդ անգամ աղաղակէին ետե՛ւ կրկե՛սին մէկ կողմը քաշուեցաւ, և վերստին հրատարակեց որ խօսքով, աղաղակով կամ գործով պայքարին միջամտելու կամ դաշն վրդովելու յանդիման մահուան պիտի դատապարտուի : Մեծ Վարդեան որ իր ձեռքը բռնած էր մենամարտին զբաւը, այս է Ռեբեկայի ձեռնոցը, այն պահուն կրկէսին մէջ նետեց և գծնդակ նշանն արտասանեց. *Օ՛հ, Գեւեցե՛ք :*

Փողիքը հնչեցին, և ասպետներն տանձարձակ իրարու դէմ յարձակեցան : Իվանօէի յողնած ձին և յողնուծ ենէ ոչնուազ յողնած ասպետը վար ընկան, ինչպէս որ ամէն հանդիսականները կ'յուսային, տառաջարկանին բաւ ուղղուած նիղակին և կորովի երիվարին ուժգնութեանէ. բայց թէ և Իվանօէի նիղակը՝ համեմատաբար, դպաւ միայն Պուա—Նիլլէրի վահանին, այս ակոյեանը, զինքը տեսնողներուն զարմանքը պատճառելով, իր թամբին վրայ երեւաց, երասանները կորոյս և կրկէսին մէջ գլորեցաւ :

Իվանօէ խիոյն ոտք ելաւ ընկած երիվարին տակէն աղտոտելով, իր սրով բաղդը նորէն փորձելու, բայց իր հակառակորդն ոտք չելաւ : Ոտքը կտրծքին վրայ դրած և սրին ծայրը կոկորդին վրայ, Վիլֆրիտ հրամայեց անոր որ անձնատուր լինի եթէ չէր կամեր նոյն վայրը մեռնիլ : Բայց Պուա—Նիլլէրը պատասխան չտուաւ :

— Մի սպաններ զանի, քանի որ տակաւին խոստովանած և արձակում առած չէ. իր մարմինն ու միանգամայն հողին մի սպաններ : Ար խոստովանինք որ յաղթուեցաւ :

Մեծ Վարդեար կրկէսն իջաւ և գիւթաւալ ակոյեանին սաղաւարտը հանել հրամայեց : Ասպետին աչիւրը գոց էին, և արիւնը տակաւին իր երեսին վրայ կ'իայլէր : Հանգիստեաններն որ զարմանազք կ'գիտէին

Պուա—Նիլյէրը, տեսան անոր աչերուն բացուիլը, բայց այս աչերն անլոյս և անշարժ մնացին: Յանկարծ արիւնը քաշուեցաւ ելեւէն և մեռեալաբար գեղնութեան մը սեղի տուաւ: Պուա—Նիլյէր, թե՛ Թշնամոյն նիւտին իրեն չէր գտած, իր բուն կիւղի զ՛հ զը էր:

— Արդարեւ Աստուծոյ գտատեսանն է այս — ըսաւ Մեծ—Վարդապետը գէտ 'ի երկին նայելով. *Fiat voluntas tua*:

Գ Լ Ո Ւ Խ Խ Գ

Այսպէս, արդ վերջացաւ իբր մի պառաւի պատճաթէն,
ՎԵՊՍԻԸՐ

Զարմացման առաջին վայրկեանն անցնելէն ետե՛ վիլֆրիտ Իվա՛նօ՛ Մեծ Վարդապետին հարցոյց, իբրեւ դատաւորի մարտին, եթէ առ նապէս և ուղղութեամբ կատարած էր իր պարտքը պայքարին մէջ:

— Աննապէս և ուղղութեամբ վարուեցար — ըսաւ անոր Մեծ Վարդապետը: — Ահա կ'հրատարակեմ՝ որ օրիորդն աղաւտ է և անմեղ: Մեռնող ասպետին ղէնքն ու մարմինը յաղթողին իշխանութեան ներքեւ են:

— Իս չեմ ուղեր անոր ղէնքն աւար առնուլ — ըսաւ Իվանօ՛ն առ պետը — և ոչ իր գիտկը վատահամբաւութեան գտապարտել: Քրիստոնէութեան համար կու տցաւ նա. Աստուծոյ և ոչ իմ բազուկս այսօր զանի վարկաւ: Թող իր յուղարկաւորութիւնն պարզ լինի, ինչպէս որ վայել է անիրաւ գտաի մը համար մեռնող մարդու մը: Խոյ այս նորատի օրիորդին պաշտով . . . :

Իր խօսքն ընդմիջեցաւ հեծելադօբաց դափէն, որոնք այնպէս արագ կ'վազէին որ գետինը կ'դզրդէին. յետոյ Սե ասպետը սրարշաւ մտաւ կրկէսը: Անոր ետեւէն մտան բաղմաթիւ զինուորներու խումբ մը և սպառազէն ասպետներ:

— Հատ ուշ կ'հասնիմ — ըսաւ նա բոլորտիքը նայելով: — Պուա—Նիլյէրն իմ բաղկիս համար պահեր էի: Իվանօ՛ն, որչափ անխոհեմ էիր այսպիսի վտանգի մ'ենթարկելուդ, քանի որ ձիու վրայ կենալու անգամ անկարող ես:

— Իշխանս, երկին պատժեց այս զոռոգ մարդն — ըսաւ Իսկանօէ :
Արժանի չէր այն մահուան զոր իրեն վերապահեր էիր :

— Թող 'ի խաղաղութիւն երթայ — զոչեց Քիչարա՝ իր աչքը դիտելին վրայ սեւեռելով : — Տաջարի ասպետ մ'էր, և ասպետտայէս մեռաւ, իր սրբովատիկ զինու.ք վառեալ. բայց սուղ է մեր ժամանակը, շտապինք. Պօհոն, պաշտօնդ կտտարէ :

Թաղաւորին հետեորդ գնդէն մին զատուելով զնաց Ալպէրտ Մալ վառազէնի ուսին վրայ գրաւ ձեռքը, և անոր ըսաւ. — Քեզ կ'ձերբաւկալեմ իբրեւ մատնիչ պետութեան :

Մէծ Վարդեան որ յայն կէտ զարմացած կ'մնար այնքան զինւորներ յանկարծ տեսնելուն, վերջապէս բերանը բացաւ և ըսաւ.

— Մըլ կ'համարձակի Սիօնի տաճարին մէկ ատպետը, 'նոյն իսկ տաճարատան Մեծ Վարդեանին ներկայութեան ձերբաւկել : Այս յանդուրն նախադիպէ որո՞ւ իշխանութեամբը կ'կատարեն :

— Իսկով ձերբաւկողը — պատասխանեց տապետը — ես Հէնրի Պօհոն Էստէքսի կամ, Անկիոյ մեծ սպարապետ :

— Եւ Մարկուպէնը կ'ձերբաւկէ — յարեց թաղաւորը՝ իր երեսպահը վերցնելով — Քիչարա Բլանդաթէէյի հրամանաւ, որ ահա տառ ներկայ է : Պօհոն Մօֆիշէ, վառք տուր որ իմ հպատակս ծնած չ'ս : Բաց զու, Մարկուպէն, զու ուխտի մեռնիս, 'նոյնպէս Քիւլիսը եղբայրդ աշխարհս եօթմեկորդ օրը հոյութիւնն առ ոջ :

— Իս այդ վճռոյն պիտի գիտադրեմ — զոչեց Մեծ Վարդետը :

— Հարաւ տաճարական — ըսաւ թաղաւորը — զու այդ իշխանութիւնը չունիս այստ հետե : Աչքդ վեր վերցուր և 'նոյն մի անգամ Անկիոյ արքայական գբօշակն որ կ'ծածանի քու գրեկիկ վրայ փոխաւ 'նակ Տաճարի գբօշակին : Խոհեմ եղիր, Պօմանուար, և պարսպ տեղը մի գիմադրեր. ձեռքդ առ խոճին կտիրողին մէջն է :

— Հռոմի պիտի բողբոմ քեզի գէմ — պատասխանեց Մեծ Վարդետը — մեր Ախալին արտօնութիւններն ու առանձնաշնորհութիւնները զբաւելուդ համար :

— Բողբոմ — վրայ բերաւ Քիչարա — բայց քու օղտիդ համար մի անուաներ զիս յափշտակիչ : Լուծէ ժողով և քու ընկերացդ հետ ուրիշ տաճարատուն մը քաշուէ գնա (եթէ կարող ես զանեւ տաճարատուն մը) որ Անկիոյ թաղաւորին գէմ մատնութեան և դաւադրութեան վայր մ'եղած չլինի . . . իսկ եթէ կ'հաճիս, իբրեւ Քիչարայի հիւր աստ կաց և մեր արդարութեան վկայ եղիր :

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒԲԵԱՆ